

18218

801-99

4-99

2003

891.542-2  
4-99

*A 205*

# Ն Ի Օ Բ Է

ԿԱՍ

## ՄԱՐՄԱՐԵԱՅ ՎԱՐԺՈՒՅԻՆ

ՖԱՐՍ 3 ԱՐԱՐԻԱԾՈՎ

Ս. Կ. ԼԵՆԻՆԻ ԹՈՒՍ. ՓՈԽԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ ՓՈԽԱԳՐԵՅ Ա. ՎՐՈՅՐ  
(ԲՆԱԳԻՐԸ ԱՆԳՐԵՐԸ Է)



Բ Ա Գ Ո Ւ  
Տպարան «ԱՐՐ»  
1898.

XX B.

891.54.2-2+[891.71-2]+[82-2]

499

UY

# Ն Ի Օ Բ Է

ԿԱՍ

## ՄԱՐՄԱՐԵԱՅ ՎԱՐԺՈՒՅԻՆ

ՓԱՐՍ 3 ԱՐԱՐԻԱԾՈՎ

Ս. Կ. ԼԵՆԻՆԻ ՌՈՒՍ. ՓՈԽԱԳՐՈՒԹԻՒՆԻՅ ՓՈԽԱԳՐԵՅ Ա. ՎՐՈՅՐ  
(ԲԵՆԱԳԻՐԸ ԱՅԳՈՒԹԵՆԸ Է)

4815

2-257  
06-1



Настоящій фарсъ, подъ заглавіемъ «Мраморная гувернантка», разрѣшенъ Главнона-  
чальствующимъ къ представленіямъ на сценахъ края  
мая 2 дня 1897 г. г. Тифлисъ.

Председатель комитета М. Гаккель.  
Секретарь Н. Меликъ-Нубаровъ.

4148



Ա. Ռ.

# Պ. Համբարձում Ա. Մելիքեան

Дозволено цензурою, Тифлисъ, 26 марта 1897 г.

ԽՈՐԻՆ ՅԱՐԳԱՆ-ԲՈՎ,

ՓՈԽԱԴՐՈՂԻՑ


**Մեծապատիւ պարոն'ն,**

Այն ազնիւ եւ կեննոս գործը, որիւն դուք պաշտպան կանգնեցիք, հայ բասրոնի համար բաց է անում մի նոր դարագրութիւն փայտուն եւ յուսալից: Թասրոնը, որ մի ֆեֆշիկ մակկան է նման, կարօս խնամքի եւ հովանաւորութեան, Ձեր եւ Ձեր ազնիւ ընկերների հոգսսար ձեռքերի սակ նոր աշխոյժ եւ նոր կեանք վերստացաւ: Իբրեւ միւր հայ բասրոնի աշխատարներից, խորապէս ընթրնեղով հաւաստով եւ համոզմունքով Ձեր ստանձնած գործի բազմակողմանի դժուարութիւնը պատիւ եւ համարում ինձ իմ այս դոյզն աշխատութիւնը Ձեր սնունդն եւ իրեղու:

**Ա. Վրոյր**

Տեսարանը ներկայացնում է Սղարէզեանցի տան մի սենեակը եւ բոլոր արարածներին մնում է միեւնոյնը: Գիշեր է:

**ԲԵՄԻ ՅԱՏԱԿԱԳԻՇՐԸ**



## ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Իշխան Միխայէլ Բագրատունի . . . . .  
Ասեփան Իվանիչ Աղաբեգեանց, ապահովագրու-  
թեան եւ ապրանքներ փոխադրող ընկերութեան  
գործակալ . . . . .  
Սուսաննա (Շուշան) Աւետիկան, նրա կինը . . . . .  
Դարիա (Դարօ) Աւետիկան, նրա բոլոր, պառաւ  
օրիորդ . . . . .  
Գեորգ Սամուէլեան, (Ժօրժ) նրանց հեռաւոր ազ-  
գայանք . . . . .  
Վիրգիլիէ, Աղաբեգեանցի բեռորդին . . . . .  
Կոստանդին Սեմեան, Գեորգի համալս. ընկերը . . . . .  
Մարգարիտա Վալէնտինովնա Սվիդերսկայեա . . . . .  
Նիքօլէ, մարմարեայ արձան . . . . .  
Պօղոս, ծառայ . . . . .

Անցքը պատահում է Քիֆիլիզում 1896 թ.

## Ա. ԱՐԱՐԻԱԾ

«ԱՊՐԱՆՔՆԵՐ ՓՈԽԱԳՐՈՂ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱԼԸ»

### 1) Դարիա.

**Դարիա.** (Մտնում է եւ Վիրգիլիէի դուռը ծեծելով) *Օրիորդ Վիրգիլիէ՛,* ի՞նչ է, ջեր էլի պատաստ չէ՞ք: Ժօրժը վաղուց եկել սպասում է . . . փեսացունին այսքան սպասեցնել չալը կատարեալ անքաղաքավարութիւն է. շուտ կը լինե՞ս թէ չէ . . .

**Վիրգիլի.** (Բեմի ետեւից) *Իսկո՛յն, իսկո՛յն, Դարիա Աւետիկանա.* հիւրա-սենեակը հրաւիրեցէք ժօրժիկին, երկու քայլ աւելի մօտիկ կրկնի ինձ:

**Դարիա.** Ա՛խ էս հիմիկայ ջեհէլնե՛րը . . . փեսան դրանք կանգ-նած է, իսկ սա այսեղ զուգվում ու զարդարում է: Մեր ժամանակը օրերով առաջ փետի ճամբին էր մնում մեր աչքը . . . (դռնից) պ. Կոս-տանդի՛ն, ժօրժի՛կ, այսեղ եկէք, ուր որ է մեր չէրվօննի թագունին էլ դուրս կուգայ . . . համեցէ՛ք, եկէ՛ք . . .

### 2) Նոյն, Ժօրժ եւ Կոստանդին.

**Ժօրժ.** Ահաւասիկ եկա՛յ եւ պատաստ եմ ամենայն համբերութեամբ չէրվօննի թագունու դուրս գալուն սպասելու . . . բայց ի՞նչու օրիորդ Վիրգիլիէին դուք չէրվօննի թագունի էք անւանում:

**Դարիա.** Ա՛խ, ժօրժիկ ջան, չեմ սիրում, որ դու քո զուխը անու-սումի տեղ ես դնում. էնքան ուսում առար, զագրանիցա էլ գնացիր, ու էլի քեզ էնպէս ես պահում, միթօ՛ւմ ոչինչ չիս գիտի. մարդու չալը աղջկայ սիրօք էրվում է իրա նշանածի համար, ու էդ էլուող սիրեն էլ կատարում չէրվօննին է:

**Կոստ.** Բայց ձեզ հետ ես բոլորովին համաձայն չեմ, հարսնացուի սիրքը ոչ թէ պիտի գաւի, այլ ուրախութիւնից բարախի, այսինքն ես դա-տում եմ փեսացունների տեսակէտից, եւ կամ աւելի պարզն ասած ինքս ինձ վրայ եմ չափում:

**Դարիսա.** Չէ՛, էդ չեմ ուզում ասել, զղամարդու բանը ջոկ է, իսկ մեր բանը բոլորովին ուրիշ մենք կհնարմասնեք մեր բոլոր կեանքում խեղճ ու կրակ պիտի սանջւինք ու չարչարւինք:

**Փօրժ.** Բայց ինչո՞ւ միայն սանջւինք:

**Դարիսա.** Է՛հ. էդ է գրած մեր ճակչին էլի՛, եւ այս բոլոր մեր քաշածը դրախտում պատահած փորձանքիցն է. մեղաւորն էլ զղամարդն էր, որ ջէր ինքը առաջ առաջ խնձորը կերաւ ու իժուս էլ եւին ուսացրեց ու կնիկ արմասն էլ-խօ գիտես էլի,-կերաւ ու հիմի չարչարուում ենք:

**3) Նոյնն եւ Վիրգիլն.**

**Վիրգ.** Ա՛հա, ես պատրաս եմ: Բարեւ ժօրժ, յարգանքներս, պ. Կոստանդին:

**Փօրժ.** Այս ի՞նչ ձեւականութիւններ է:

**Վիրգ.** Լռի՛ր, դու ոչինչ չես հասկանում, վաղը մեր հարսանիքն է եւ այսօր որքան կարելի է մենք պաշտօնական ձեւով պէտք է վարւինք միմեանց հետ—այս բուն իսկ անգլիական սովորութիւն է:

**Փօրժ.** Ի՞մ կարծիքով այդ շատ յիմար սովորութիւն է. բայց եւ այնպէս իմ գործը չէ:

**Կոստան.** Վիրգիլէն . . . այսինքն օրիորդ Վիրգիլէն, կատարելա իրաւունք ունի, եւ ես բոլորովին համաձայն եմ նրա հետ:

**Վիրգ.** Ա՛հ, որքա՛ն ազնուութիւն է այդ ձեր կողմից:

**Դարիսա.** Է՛հ, հոգիս, հիմի քաղցր խօսում էք, բայց իժուս ոտքի տակ գնացողը էլի կնիկարմասն է:

**Կոստ.** Ո՛չ, Դարիսա Աւետոյնա, ես մինչեւ հարսանիքս ի՛նչ սովորութեան կամենաք կը յարմարւիմ, անգլիականի, եւ մինչեւ իսկ հօթէն-ձօտականի էլ, եթէ ի հարկէ այդպէս է կամենում Վիրգիլէն . . . օրիորդ Վիրգիլէն . . . բայց հարսանիքից յետոյ . . .

**Վիրգ.** Է՛, ի՞նչ հարսանիքից յետոյ . . .

**Կոստ.** Իսկ հարսանիքից յետոյ կը փոխարկեմ զուտ հայկականի. կանա՛յք, հնազանդ լեռուք արանց ձերոց՝:

**Վիրգ.** Ա՛հ. ինչպէս ինձ վախեցրիք . . . բայց կարծեմ մեկնելու ժամանակ է . . . դողան պատրաստ է:

**Դարիսա.** Ամբողջ ժամանակ կուվում էր խեղճ կնոջ հետ . . . ըր՛ըն ոչ բարով բրոջս էր ուստ էր եկել հա՛, մի մարդ, որ քանի պէտքա-կան չէ. . .

**Փօրժ.** Է՛հ, դուք էլ շարունակ խեղճ Ստեփան Իվանիչի վրայ էք յարձակուում:

**Դարիսա.** Ախար ո՞նց չի յարձակւիմ, էսպէս էլ բան կուլի՞, ինչ գործի ձեռք է տալի թարսում է . . . իմ խեղճ բրոջս էնքան բաժինքը չէ՞ր, թառ ու մառ էլաւ . . . ի՛նչ գործի կանգնեց՝ դիպ թա՛րս, դիպ թա՛րս, դիպ թա՛րս:

**Վիրգ.** Բայց մօրեղբայրս այժմ հիանալի պաշտօն ձեռք բերեց:

**Դարիսա.** Կը տեսնե՛նք, մի բան էլ էստեղ դուրս կուգայ . . . ո՞նց չէ. մի խերով բան էլ կուռք է, չոչչելա է, ինչ զարուամար է, էն է:

**Կոստ.** Ինչ կուռք:

**Փօրժ.** Դարիսա Աւետոյնան այդպէս է անւանում այն արձանը՝ որ Հռովմից են ուղարկել իշխան Բագրատունու համար:

**Վիրգ.** Ա՛հ. հրաշալի արձան է, „Արտաւոյ Նիօրէն“ որ չգիտեմ որ արձանագործի ձեռակերտն է, ասում են իշխանը դրա համար 15 հազար բուրլի է վճարել:

**Կոստ.** Բայց այդ ի՞նչ կապ ունի Ստեփան Իվանիչի հետ:

**Փօրժ.** Գիտէ՞ք ինչ. այդ արձանը Բաթումից երկամուրով ստացւեց այստեղ եւ այժմ Ստեփան Իվանիչի պատրէն է դրան ծիւռ վրայ բարձած մինչեւ իշխանի կալուածը հասցնելը:

**Դարիսա.** Նա էլ հէնց դրա համար է գժել. խան ուզում է էնպէս եաշխիլ շինել այդ, որ ոչ մի ստալետար չի կարա շինել, խան ուզում է էնտեղ դրկելու համար ինչ որ տեսակ կպէտակա սարքել այդ . . .

**Վիրգ.** Բայց չէ՞ որ մօրեղբայրս շատ է վախեցնում որ չփչանայ, մինչեւ անգամ նրան նայելու էլ չի թողնում մեզ:

**Կոստ.** Իսկ արձանը ձեզ մօտ, տա՛ն է:

**Դարիսա.** Էտե՛ղ է, էտե՛ղ, ոչ բարով բերել էին ընձա՛, էն փարդի ետեւն է կանգնացրած:

**Կոստ.** Կարելի՞ է տեսնել:

**Վիրգ.** Չէ՛, չէ՛, ձեռք չտար, ապա թէ ոչ մօրեղբայրս կըբար-կանայ. բայց ա՛նա եւ նա . . .

**4) Նոյնն եւ Աղաբէգեանց.**

**Աղաբ.** Գուք ո՛չինչ, ո՛չինչ չէք հասկանում, եւ նեղացնում էք ինձ ձեր անկրթութեամբը . . . ա՛յո նեղացնում էք . . .

**Դարիսա.** Դա՛, դա՛, դա՛, համա դուն էլ ի՛նչ կրթւածն ես . . . քեզ էլ գիմնագիտի չէսվէրտի կրտսիցը դուրս արեցին:

**Աղաբ.** Ի՛յ, դուրս արեցին ու լաւ արեցին. ես դրանով պարծե-նում եմ, ես չէի կարողանում յունարէն բառերը սովորել եւ առանց դրանց էլ մարդ դարձայ ու մարդու մէջ մտայ:

**Վիրգ.** Մօրեղբայր, սեսէ՛ք, ի՛նչ լաւ դուրս եկաւ իմ շրջագգեսս:

**Աղաք.** Այո՛, այո՛, լաւ է, շատ լաւ է. քայց եւ այնպէս պատահասեցէ՛ք, դէ՛ ժամանակ է:

**Դարիա.** Դու մեզ հետ չիս գալու էլի՛:

**Աղաք.** Ո՛չ, երբ ամբողջ ճնով գնում էք, ես չեմ կարող այս սեղից հեռանալ, ո՞վ է իմանում, գուցէ յանկարծ հրդեհ կամ մի ուրիշ բան պատահի. ես իբրեւ հաւատարիմ ծառայող՝ գործիս գլխին պիտի կանգնեմ եւ Նիօբէի վերայ հսկեմ:

**Դարիա.** Ես ձեզ չասեցի՞, քորորովին գժել է . . . էդ ձեր Նիօբէն աղ չէ որ հալւի:

**Կոս.** (Կամաց ժօրժին) Է՛, մի բան իմացա՞ր:

**Ժօրժ.** (Կամաց) Իմացա՛յ, քեզ յետոյ կը պատմեմ:

**Աղաք.** Ի՞նչ, դուք ինչ որ կամենում էք ասացէք, իսկ ես մինչեւ որ այս արձանը իւր սեղը չհասցնեմ, նրանից մի քայլ անգամ չեմ կարող հեռանալ:

**Դարիա.** Դուք այս յիմար արձանի պատճառով կարծեմ ձեր կնոջն էլ պիտի մոռանաք, ձեր երեխաներին էլ:

**Աղաք.** Ես ոչոքի. եւ ոչինչ էլ չեմ մոռանայ . . . հա՛, քիչ էր մնում մոռանալի, ես հեռագիր ստացայ վարժուհուց եւ նա վաղը կամ գուցէ հէնց այսօր էլ այստեղ հասնի. նրա իրեղէնները ստացեց արդէն ու այստեղ դնել սեցի:

**Դարիա.** Սաղ գալան լքրեցիր էլի՛, էս արձան է, էս սոււնդուկ է. . . Ասուած է խաբար թէ էլ ինչե՛ր չէք անելու:

**5) Նոյնի եւ Պօղոս.**

**Պօղոս:** Աղա՛, ինչ որ պարոն ձեզ է հարցնում:

**Աղաք.** Ի՛նչ է ազգանունը:

**Պօղոս.** Չհարցրի. ասում է հարկաւոր գործ ունիմ աղի հետ:

**Աղաք.** Ո՞վ է արդեօք. գնամ տեսնեմ. (զնում է):

**6) Նոյնի առանց Աղաքէգեանցի.**

**Դարիա.** Դէ՛, գնալու ժամանակ է, Վիրգին ջա՛ն, շլետպազ ծածկիր ու հայդա՛:

**Վիրգ.** Գնա՛նք, դողա ջան, գնա՛նք:

**Դարիա.** Գնա՛նք. գնա՛նք, տղերք. դուք կացէք էստեղ, հիմիսկեւ էս գալիս ենք. (զնում են):

**7) Ժօրժ եւ Կոստանդին.**

**Կոստան.** Դէ՛, շուտ պատմիր, թէ ի՛նչ իմացար:

**Ժօրժ.** Բանից դուրս եկաւ, որ գործը քո ասածից աւելի դժւար է:

**Կոստան.** Բայց ինձ քորորովին չէ նետաքրքրում իմ ասածը, այլ քո անելիքը:

**Ժօրժ.** Ուրեմն լսի՛ր, քո խնդրքի համաձայն, ես իմ Վարշաւայի ընկերոջս գրեցի, նա սեղեկացել է եւ ահա թէ ինձ ինչ է գրում. (կարդում է) „Իմ հաւաքած սեղեկութիւններից երեւաց, որ Ալէվդինա Վալէն-սինովնա Սվիդէրսկայան մեկնել է Վարշաւայից իւր Մարգարիտա քրոջ հետ միասին, որը Թիֆլիսում, Աղաքէգեանցների սանը վարժուհու պաշտօն է ստանձնել:“

**Կոստան.** Բայց սարսափելի է այդ . . . անշուշտ նա դիտմամբ իւր քրոջը ուղարկում է այստեղ, որպէսզի արգելք լինի իմ եւ Վիրգինէի ամուսնութեան:

**Ժօրժ.** Բայց խնդրեմ ասա, այդ Ալէվդինան մի որ եւ է իրաւունք ուն՞ է քեզ վերայ:

**Կոս.** Յաւնէլ հէնց այդ է որ ունէ . . . Թէ եւ երկու տարի է որ մենք բաժանուած ենք, բայց նա իմ ամէն մի քայլափոխիս հետեւում է, եւ պահանջում, որ իւր գրած նամակները իրան վերադարձնեմ, ես այդ նամակները ոչնչացնելու անխոհմտութիւնը ունեցայ, եւ այժմ նա ինձ չէ հաւատում՝ կարծելով թէ ես դիտմամբ պահում եմ:

**8) Նոյնի, Դարիա, Շուսան եւ Վիրգինէ.**

**Դարիա.** Վիրգինէ ջա՛ն, ես վերցրի ծածկոցը:

**Վիրգ.** Բայց եղանակը այնպէս սաք է որ, դողա ջա՛ն:

**Շուսան.** Նախազուշուժիւնը միշտ լաւ է, ո՞վ գիտէ, յանկարծ անծրեւ գայ . . . Ստեփան Իվանիչն էլ ինչ որ պարոնի է բերում այստեղ, նա էլ ժամանակը գտաւ:

**9) Նոյնի, Իսխան Բագրատունի եւ Աղաքէգեանց.**

**Աղաք.** Չերդ պայծառափայլութիւն, թոյլ սէքք ներկայացնել ձեզ իմ ընտանիքի անդամները. կինս, կնոջս քոյրը, քեռադուստրս, նրա փեսացուն պ. Սեմեան, պ. Սամուէլեան:

**Իսխան.** Շատ ուրախ եմ, պ. Աղաքէգեանց, շատ շնորհակալ եմ ձեզանից իմ Նէօբէի մասին ձեր տարած խնամքի համար:

**Աղաք.** Ի՞նչ էր ատում, Ձերդ պայծառափայլումիւն, այդ իմ պարսաւորումիւնս է:

**Իւշխան.** Բայց դուք զեղարւեսը մշմարիս գնահատողի նման կատարում էք ձեր պարսաւորումիւնը:

**Աղաքէզ.** Շատ սիրալիր էք, Ձերդ պայծառափայլումիւն, եւ ինչպէ՛ս հոգս չսանել, Ասուած մի՛ արանցէ, եթէ յանկարծ արձանի մի մասը եւ կամ քիթը կոտրւի . . .

**Իւշխան.** Ա՛յո, շատ մշմարիս է, եւ աշխարհի ոչ մի հարսուծիւնը իբր նրա փոխարինումիւն չէի ընդունի. ամբողջ դարեր անվստիք անցկացան զեղարւեսի այս սեղծագործութեան զլիւից, չէ՞ որ ըստ ղեցարանութեան . . .

**Աղաք.** Ձերդ պայծառափայլումիւն, ես ղեցարանութեան նեւ գործ չունեմ. ահա, տեսէք ես որտեղ եմ պահում: Երբ վարչումիւնից լուր ստացայ թէ այստեղ պիտի ուղարկւի Նիօբէի արձանը Ձերդ պայծառափայլութեան հասցնելու համար՝ ամբողջ տունը ոտքի կանգնացրի, որ հասկանամ թէ ի՞նչ է, եւ կամ ո՞վ է այդ Նիօբէն. ոչ ոք չէր իմանում. ժօրժիկը քաղաքումը չէր, իսկ Վիրգինէն հազիւ յիշեց թէ Նիօբէն Թերէի Թագուհին էր եւ 7 ճղայ ու 7 աղջիկ ունէր:

**Վիրգ.** Ո՛չ, քեռի՛ս. ես ձեզ Նիօբէի ամբողջ պատմութիւնը գրուցեցի, ես միայն չէի կարողանում յիշել այն սասւածուհու անունը, որը Նիօբէի նեւ վէճի բռնեց, եւ այնքան նրան հակառակեց, որ մինչեւ գնաց Ապօլլոնին գանգատեց, որպէս զի պատժէ Նիօբէին:

**Իւշխան.** Այդ սասւածուհու անունը Լօթմանա էր:

**Վիրգ.** Ա՛յո, Ձերդ պայծառափայլումիւն, վերջը քեռիս ձեռք բերեց եւ ես ամբողջ ղեցարանութիւնը կարդացի:

**Աղաք.** Ա՛յո, Ձերդ պայծառափայլումիւն, ձեռք բերեցի եւ մէկ ծայրից մինչեւ միւս ծայրը կարդացի: Հաւատացէք, ես այն սասիճան գրաւած էի այդ ընծերցանութեամբ, որ մինչեւ անգամ ղեցարանական բովանդակութեամբ երագներ էի տեսնում: Օրինակի համար, ամաչում եմ մինչեւ անգամ անելու երեւելու տեսնում եմ թէ Ապօլլոնն եմ. եւ անցնում եմ զլիսաւոր փողոցով, իսկ իմ ետեւից այնչափ կանայք էին ընկել որ . . .

**Շուտան.** Ի՞նչ զգուցի բաներ էք ասում:

**Գարիա.** Եւ այն էլ ջանէլ աղջկերանց մօտ . . .

**Աղաք.** Բայց այստեղ ի՞նչ զգուցի բան կայ. չէ՞ որ այդ երագ էր, եւ մարդս երագում երբեմն այնպիսի բաներ է տեսնում, որ Ասուած հեռու պահի: Սրանից 3 օր առաջ ձեր տեսած մի այնպիսի երագը պատմեցիր, որ իմ տեսածից ակտի անձոնի էր:

**Շուտան.** Բայց Ստեփան Իվանիչ, այդ ի՞նչեր էք ասում:

**Աղաք.** Դէ լա՛ւ, լա՛ւ:

**Իւշխան.** Խնդրեմ ասացէք, ո՞ր դրեցիր դուք իմ Նիօբէն:

**Աղաք.** Այստեղ է, Ձերդ պայծառափայլումիւն, ես վարագորով ծածկեցի եւ առանց իմ հրամանին չեմ թողնում որ մէկը նրան մօտենայ: **Իւշխան.** Ուրեմն մենք կարող ենք այդ հրաշալի արձանը տեսնել:

Մանաւանդ որ լուսաւորումիւնն էլ սրանչեւի է. տեսէ՛ք, լուսինը պատուհանից ուղղակի այստեղ է խփում, եւ եթէ սիկնայք թոյլատրեն, մոմն էլ կը հանգցնենք:

**Շուտան.** Օ՛, խնդրեմ, մի քաշէ՛ք, Ձերդ պայծառափայլումիւն:

**Վիրգ.** (Կոտակողմին) Այս բողբոջի դուք կը տեսնէք թէ ի՞նչ հիւանայի բան է:

**Իւշխան.** Այսպէս ուրեմն, մենք մոմը կը հանգցնենք, իսկ դուք պ. Աղաքէզեանց բաց արէք վարագորը:

**Աղաք.** Այս բողբոջի. Ձերդ պայծառափայլումիւն: (Երաժշտութիւն: Աղաքէզեանցը վարագորը բաց է անում, երեւում է „Արսաւող Նիօբէի“ արձանը, պատուհանից ուժեղ ելէկտրական լուսով լուսաւորւած):

**Բոլորը.** Ա՛հ այս ինչ սիրուն է, այս ի՞նչ սրանչեւի է:

**Գարիա.** Ձի էլ ամանչում, տեսէ՛ք, ծունկը ո՞նց է դրել:

**Իւշխան.** Բայց ի՞նչ կլասիկական ծունկ է:

**Գարիա.** Շատ էլ կլասիկական է, խալիսի խօ՛ւ չեն շանց սայ:

**Աղաք.** Ինչպէս երեւում է, Ձերդ պայծառափայլումիւնը սիրահարւած է նրա վրայ:

**Իւշխան.** Դուք մի՛ զարմանաք ինձ վերայ. ես ոչ մի ուրիշ սէր չեմ ճանաչել, միմիայն սրանից շատ դարեր առաջ ծնւած մի այսպիսի զեղեցկուհի կարողացաւ իմ արժիս սիրապետել:

**Աղաք.** Է՛հէ՛ . . . որ այդպէս է, անշուշտ իմ կնոջս քոյրն էլ ձեզ կարող է հրապուրել, նա էլ շատ հին եւ հազազիւս ապրանք է:

**Իւշխան.** (Արձանով զրաււած) Կարծէք կենդանի կանգնած է մեր առաջ, ա՛հ, ո՛րքան արտայայտիչ է նրա հրաշալի ղէմքը, որ իւր Ա երեխաներին է ողբում . . . ղէ՛, վարագորը ծածկեցէք եւ վառեցէք մոմը:

**Աղաք.** Աւելորդ է վառելը, ցերեկայ պէս լոյս է:

**Վիրգ.** Ձերդ պայծառափայլումիւն, ասացէք խնդրեմ, Ապօլլոն ինչո՞ւ Նիօբէին արձանի փոխարկեց, քանի որ նա առանց այդ էլ խօսելու պատժւած էր՝ կորցնելով թէ իւր երեխաները եւ թէ հարսութիւնը:

**Իւշխան.** Չայրացած Լօթմանի սասւածուհուն այս պատիժը քիչ թուաց, որովհետեւ Նիօբէն իւր վշի մէջ անգամ այնպէս զեղեցիկ էր. այնպէս վե՛հ, որ ընդհանուր ժողովրդի համակրութիւնն էր գրաւել, որին սկսան պաշտել իբրեւ իմաստութեան սասւածուհի. Լօթմանին նախանձից չկարողացաւ տեսնել Նիօբէի յողովանակը, նորից ղիմուպոս. որպէս զի պատժի այդ իրա համար ասելի կինը. այն ժամանակից Նիօբէն արձանի փոխարկեց:

**Վ.իրգ.** Ի՞նչ արձաշարժ պատմութիւն է:

**Թ.Եսան.** Բայց ժամի 9 է արդէն. ներեցէք որ անակնկալ կերպով ձեզ մօտ եկայ եւ խանգարեցի ձեզ:

**Շուշան.** Ա՛յո, իշխան, մենք պատրաստուած էինք մեր բարեկամներից մէկի տունը տեսող երեկոյթին գնալու, սա վերջին օրիորդական երեկոյթն է, ուր պիտի ներկայ լինի մեր Վ.իրգինէն:

**Թ.Եսան.** Թոյլ սէք շնորհաւորել ձեզ, կատարեալ բաղաւորութիւն եմ ցանկանում:

**Վ.իրգ.** Շնորհակալ եմ, Ձերդ պայծառափայլութիւն:

**Թ.Եսան.** Յետուծիւն, սիկին, ցետուծիւն, պ. Աղաբէգեանց, վաղը կուղարկէք իմ արձանս, այնպէս չէ՞:

**Ա.ղաբ.** Ա՛յո, Ձերդ պայծառափայլութիւն. վաղը մի աւանմին սնդուկի մէջ կը տեղադրենք եւ մէկ օրից յետոյ դուք կատանաք:

**Թ.Եսան.** Ա՛հ, ի՞նչ անհամբերութեամբ պիտի սպասեմ նրան, ցետուծիւն. (զնում է):

**10) Նոյնի, առանց ի.Եսանի.**

**Դարիա.** Օ՞հ, ձիւ մէ չգնա՛ց . . . դէ՛, շտպեցէ՛ք, գնանք, ի՞նչ ամօթ բան եղաւ. 10 սնամին վէջերի գնալ կուզի՞ . . .

**Վ.իրգ.** Պ. Սեմեան, սէք ձեր թերը . . . գնանք, դողա ջա՛ն:

**Դարիա.** Գնանք, գնանք. դու խօսողի լաւ կաւալէրներին ես ջոկում. (բոլորը գնում են):

**11) Ա.ղաբէգեանց, առանձին.**

**Ա.ղաբ.** Այս իշխանը ինձ աւելի սարսափեցրեց . . . եւ ինչպէ՞ս է նա նրան գնահատում: . . . Ասուած մի արասցէ, եթէ ձանապարհին փշանայ. ընկերուծիւնը անգիրն վնասի կենթարկելի . . . իսկ ես այն ժամանակ էլ ո՛ր կարող եմ փախչիլ նրա ձեռքից . . . Այս Նիօբէն բոլորին ոտի կանգնացրեց . . . իսկ իշխանը շատ սիրալիր մտրդ է երեւում. եթէ ինչպէս հարկն է տեղ հասցնեմ, ինձ պարգեւ տալ խոստացաւ: Ա՛հ, ինչպէս քունս տանում է, ձաշից յետոյ չեմ քնել, վաղը սնդուկը կուղարկեմ . . . եւ ինքս անծամբ պէտք է տեղադրեմ . . . (նկչում է):

**ԳՈՐԾԱԿԱԼԻ ԵՐԱԶԸ:**

(Թերեւում մի հրապարակ: Երկտեւ բազմութիւնը դիմաւորում է Լօթանաին, Նիօբէ իւր երկխաֆեի ուղեկցութեամբ Լօթանի մօտով հպարտ անցնում է, նա պահանջում է Նիօբէից, որ իրան համապարհ տայ, իսկ Նիօբէն հպարտ եւ արհամարհանով անցնում է. Լօթանա ասուածներին է

դիմում. Նիօբէ կրկին վերադառնում է. Ապոլլոն երկանիւ կառնով նրան է մօտենում. Լօթանա նրանից պատգամութիւն է հայցում. կայծակի հարուածը Նիօբէին արձանի է փոխարկում: Աղաբէգեանց զարթնում է). Ի՞նչ բան էր, այս ի՞նչ յիմար երազ էր, դարձեալ, արձանը խօսչ՝ վնասուեց . . . (վարագոյր բացում է եւ Նիօբէն կենդանանում):

**Նիօբ.** (Հառաչելով) Ա՛հ:

**Ա.ղաբ.** Տէր Ասուած, կարծես թէ հառաչեց . . .

**Նիօբ.** (Պատահականից իջնում է եւ իւր մարմնի անդամները ուղղում):

**Ա.ղաբ.** Այս ի՞նչ է, ցած է զալիս . . .

**Նիօբէ.** Ո՛վ շանձընկեցըր հօր Արամազդ, իմ ջղերիս մէջ կրկին ջերմութիւն է արդ տարածում, նորից սպրում եմ եւ նորից շնչում:

**Ա.ղաբ.** Այս ի՞նչ խաղեր է սարքում այս արձանը:

**Նիօբէ.** Ես Ոլիմպոսի բարձր կամրով, նորից կենք վերսացայ . . .

**Ա.ղաբ.** Տէր Ասուած, նա կենդանացա՛ւ, ես կը մեռնի՛մ, հիմի ո՛ր բարովք տամ զուլիս . . .

**Նիօբ.** Իսկ դու աներկիւղդ, ո՞վ ես, այդպիսի անծանօթ, օտար եւ յոյժ ծաղրածու այդ զգեստներով:

**Ա.ղաբ.** Էդ մէկը ներողութիւն, ես ինչպէս հարկն է այնպէս էլ հագնեած եմ, իսկ դուք բաւականին տարօրինակ կերպով էք զգեստաւորուած:

**Նիօբ.** Եւ ինչո՞ւ համար այդ նեղ ու սգեղ տպագրութեան մէջ կաշկանդել ես քո ազատ ոտները:

**Ա.ղաբ.** Ա՛յ քեզ նոր բա՛ն. հապա ի՞նչ հագնեմ, բայց նա ի՞նչ գործ ունէ իմ շարվարիս հետ:

**Նիօբ.** Օ՞հ, շո՛ւտ, դէ՛ն ձգիր այդ սարսափելի հագուստը սգեղ, ինչո՞ւ ծածկել այն՝ ինչ հաճելի է տեսնել մեր աչաց:

**Ա.ղաբ.** Էդ մէկը ներողութիւն:

**Նիօբ.** Շո՛ւտ, տար ինձ ուրեմն Ամֆիօնիս մօտ, որ բարեկամիս կարողանամ ես արձանը ողջունել:

**Ա.ղաբ.** Տիկի՛ն, դուք կարծեմ բոլորովին զլիս չէք ընկնում, մենք 1897 թւականումն ենք սպրում:

**Նիօբ.** Ի՞նչ ես խօսում դու, ո՛վ մահկանացու. մի՞թէ Թերեթի ես իմ մեծ շքեղ պալատումը չե՞մ:

**Ա.ղաբ.** Դժա՛ւ: Ո՛չ, այս ձեր պալատը չէ՛, իմ տանս էք, որին 75 տարի եմ վճարում, այն էլ առանց վառելափայտի:

**Նիօբ.** Ո՛վ դուք ասուածներ, ողորմեցէք ինձ, փոխարկէք նորից ինձ ցուրտ մարմարի:

**Ա.ղաբ.** Ա՛յս երանի թէ նա մի այդպիսի բան անէր . . .

**Նիօբ.** Ո՛հ, հոտէք արցունք, լաց ո՛վ Նիօբէ. Թագուհիդ առանց Թագաւորութեան, եւ մայրը առանց երեխաների:

**Աղաք.** Էհէ՛, հիմա էլ արցունք, ջղածգութիւններ . . . անկեղծ եմ առում որ առն արեամբ տեսնել անգամ չեմ կարող: Ինձ նայեցէք, մաղամ, անունն էլ չգիտեմ. Նիօթէնա Անսօ՛նովնա, հանգստացէք խնորեմ, կարելի է որ դուք անախորժութիւնների էք պատահել, բայց չէ՞ որ 2 հազար տարի անցկացան, այժմ կարելի եւ մոռանալ:

**Նիօթ.** (Ալալով) Ո՛հ դու իմ սիրքը շարժեցիր սաստիկ, իսկ Նիօթէին շարժել շատ հեշտ է:

**Աղաք.** Դէ՛, շատ էլ հեշտ չէ, ուժ հոգի հազիւ տեղից կարող են շարժել:

**Նիօթ.** Ուրեմն ասա դու ինձ համարձակ, ո՞րքան ժամանակ է որ չեմ ապրում ես այս աշխարհում, այժմ զարմանքը պաշարել է ինձ:

**Աղաք.** Թեպէ՛ս տարիքի մասին կանանց հետ առ հասարակ զգուշութեամբ պէ՛տք է խօսել, բայց սա մի բացառիկ դէպք է, բուն իսկ կանացի հաշուով այժմ դուք այսպէս մի 3000 տարուց քիչ էլ աւելի կը լինիր:

**Նիօթ.** (Սարսափած) Եւ 3000 երկար տարիներ ես սանջւել եմ իրրեւ ցուրտ մարմա՛ր:

**Աղաք.** Բայց մի նեղանալու պատճառ էլ չունիր, ըստ ձեզ, ձեր դիցաբանական տեսակէտից՝ դուքս է գալիս որ դուք մի 25 տարեկան տիկին էք:

**Նիօթ.** Յայտնիր ինձ բոլոր մշտաբնութիւնը, Արեգ աստուծոյ բարութիւնն արդէն վաղու՞ց է անցել:

**Աղաք.** Այո՛, աստուծոց բանը վաղուց պրծած է, մանաւանդ արեգակի աստուծոյ եւ նրանք ձեզ ոչ մի վնաս չեն կարող պատճառել, միայն ցաւալին այն է որ մի կէս ժամ առաջ դուք 15 հազար բուրլի արժէիք, իսկ այժմ ոչինչ չարժէք. խնորեմ պատւանդանի վրայ դարձեալ ձեր տեղը կանգնեցէք:

**Նիօթ.** Ա՛հ. դու որ նորից կեանք սիր դժբաղդիս, անծրս յանձնում եմ քեզ բոլորովին, իմ ունեցած նուրբ փաղաքըջանքով, իմ բոլոր սիրով, վերցրու ահա՛, ես քոնն եմ արդէն:

**Աղաք.** Զարմանալի բան, այս կանայքը ինչպէ՛ս սիրում են ինձ, մարմարեա գեղեցկութիւններն անգամ իմ գիրկս են ընկնում:

**Նիօթ.** Դու հեղափոխութիւնը քո այդ ժպիտով, ո՛վ իմ սիրելի, այնպէս կապեցիր քեզ հետ իմ սիրքը, որ Նիօթէան քոնն է յաւիտեան:

**Աղաք.** Ձէ՛, խնորեմ քիչ զգո՛ւ եղէք, ես արդէն կին ունիմ:

**Նիօթ.** Ո՛չ, դու Թեբէի մեր օրէնքների համաձայն երկու կարող ես պահել:

**Աղաք.** Իսկ ես այդ մէկիցն էլ ինչպէ՛ս ազատեցրու վրայ եմ մտածում, բայց եթէ կինս այդ բանը իմանայ, այն ժամանակ վա՛յը քո հալին:

**Նիօթ.** Ձէ՞ որ դու տէր ես, եւ միշտ կարող ես նրան վաճել . . .



**Աղաք.** Ես այն տեսակին եմ պատահել, որ աւելի շուտ ամբողջ կվունդէ:

**Նիօթ.** Իրրեւ քո գերին, հրապարակում տար եւ վաճառիր:

**Աղաք.** Եւ ոչ մի յիմար առնող չի լինի. դեռ օժտով էլ վերցնող չկայ:

**Նիօթ.** Չկայ այլ եւս ոչ մի տարակոյս, ես եմ միմիայն առանց ամուսնու, առանց զաւակաց եւ ընտանիքի. դէ՛, փախչենք, գնանք դէպի Բէօժէա, եւ շատ երջանիկ կը լինինք այն տեղ:

**Աղաք.** Ձէ՛, դու այդ փախչելուց ձեռք վերցրու, աւելի լուրջ խօսենք, այս քարէ արձանի պատճառով ես շատ նեղութիւն կրեցի, բայց ես ի՞նչ անեմ հիմի, երբ դուք կենդանանալ բարեհաճեցիր:

**Նիօթ.** Օ՛հ . . . մերժում է ինձ, դու մի պաղ, անսիրտ, անզգայ քար ես. (լալիս է):

**Աղաք.** Որքան կամենում էք ինձ հայտնեցէք, միայն թէ մի լաց լինիր, դէ՛, բաւական է . . . ես հիմի եմ հասկանում թէ աստուծոց արանից երեք հազար տարի առաջ ինչո՛ւ ձեզ արձանի փոխարկեցին. նրանք անշուշտ չկարողացան ասնել ձեր այդ լացը. լա՛ւ, լա՛ւ, այստեղ մնացէք, միայն թէ սովորաբար էք ինձ, թէ ձեր ներկայութիւնը ի՞նչպէս բացատրեմ ասնեցոց:

**Նիօթ.** Առանց տատանման յայտնեցէք բոլոր մշտաբնութիւնը:

**Աղաք.** Բայց ո՞վ կը հաւատայ ինձ. մեր ժամանակում արձանները չեն կենդանանում, այդ բանին ոչ ոք չի հաւատայ, հէնց նախ եւ առաջ մեր տան առաջ կանգնող ոստիկանը ձեր ով լինելը կը հարցնէ, իսկ դուք անցագիր չունիք, միեւնոյն ժամանակ ձեր հագուստն էլ բանի նման չէ, թէեւ դա պատմական է, բայց դրա պատճառով շատ անհամութիւններ կարող են պատահել, դուք պէ՛տք է մի որ եւ է շրջագրես հագնէք:

**Նիօթ.** Դէ՛, շուտով կանչիր քո գերիներդ, գերուհիներդ, թող լսանան ինձ, քաղցրաբոյր իւրով մարմինս օժեն:

**Աղաք.** Մենք մի ինչ որ աղախին ունինք, շուտ գնացէք վերեւ, երեխաների սենեակը, ես էլ իսկոյն կը գամ, եւ կը հասկացնեմ ձեզ թէ մօզնի շրջագրեսը ինչպէս պէ՛տք է հագնել:

**Նիօթ.** Քո պատէհները օրէնք են ինձի, եւ ես պատրաստ եմ բոլորն կատարել: Օ՛, Ոլիմպոսի անմահ աստուծներ, խնորեմ գոնէ դուք միեւնոյն վերցնէք վիրաւոր սիրտս եւ դէք բուժիչ մի սպեղանի. (լալով գնում է):

**Աղաք.** Էսքան էլ պահանջողութիւն, էլ քաղցրաբոյր իւրեր, սպեղանիներ, միեւնոյն ժամանակ շարունակ լալիս է . . . մեր տունը որ մինչեւ այժմ չոր էր, նա անպատճառ պիտի խոնավանայ: Բայց ի՞նչ պէ՛տք է հագցնել նրան, կնոջս շորերից վերցնել՝ անկարելի է, բայց դրանից կողպած էլ է. (սնդուկը նկատելով) ահա վարժուհու սնդուկը, հաստատ նա այսօր գալու չէ, ես նրա մի զգեստը մինչեւ վաղը կարող եմ սրան հագցնել. բայց ինչպէ՛ս բաց անեմ սնդուկը . . . է՛հ մի անգամ որ գողու-

5185

Թիւնը վնեցի, Թող որ կատարեմ եւ այն էլ փականքը կոտրելով . . . անա  
ասաղծագործները այստեղ են Թողել իրանց գործիքը, (վերցնելով ուրազը)  
մէկ . . . երկու . . . երաւ . . . ան ի՛նչ լաւ է, հէնց վերեւում այս  
սեւ շրջագգեսն է դրած . . . նրա վրայ էլ լաւ կըզայ (զգեսը վերցնում է  
եւ գնում):

**12) Տեսարանը դատարկ է. ապա մտնում է Պօղոս.**

Մեր աղէն քնեց, ինչ է. չայ էլ չի խմել . . . մոտերն էլ հանգ-  
ցրած, պէտք է վառել, ուր որ են խանութներն էլ կու գան, (մտքը վառում է  
եւ կոտրած սնդուկը տեսնում) այս ի՛նչ է, սնդուկը բաց է, մի՞թէ նոր  
վարժուհին եկաւ . . . բայց ի՛նչ ճամբով մտաւ որ չ՛եսայ. անշուշտ աղէն  
դուռը բաց արաւ, այս ի՛նչ է, սնդուկը կոտրած, օգնեցէ՛ք. գող կայ,  
գողե՛ր, գողե՛ր . . .

**13) Նոյն եւ Աղաբէզեանց.**

**Աղաբ.** Դու ի՛նչ ես գում աչսեղ, հը՞:

**Պօղոս.** Գողե՛ր. Թալանեցին, տարա՛ն:

**Աղաբ.** Ի՛նչը. ո՞րտեղ է:

**Պօղոս.** Մնդուկն են կոտրել:

**Աղաբ.** Լռի՛ր, ախմախ, սնդուկի մասին ոչ ոքի բան մի ասի:

**Նիօք.** (Սանդուխի վերայ սեւ զգեսով) Թող Ոլիմպոսի վե՛հ ասուած-  
ները առաքեն ձեզի իրանց շնորհքն ու ողորմութիւնը, Թող պարգեւեն  
ձեզ երկար տարիներ, ուրախութիւն եւ բազդաւորութիւն:

**Քոլորք.** Այս ո՞վ է:

**Աղաբ.** Մեր նոր վարժուհին է, Մարգարիայ վալէնտինովնա Սվի-  
դէրովայան:

- Դարիա.** Լաւ պտուղ չէ երեւում:
- Շուշան.** Ի՛նչպէս, արդէն եկաւ:
- Կոստան.** Ալէվիինայի քո՞յրը, կորայ:
- Վիբգ.** Ի՛նչ սիրունիկ է:
- Աղաբ.** Ասուած վերջներս բարի անէ:

Վարագոյր

**Բ. ԱՐԱՐՈՒԱԾ.**

„ՄԱՐՄԱՐԵՍՅ ՎԱՐՃՈՒՂԻՆԸ“

(Յերեկ է)

**1) Շուշան, Դարիա եւ Պօղոս.**

**Դարիա.** Ձէ՛, չէ՛, դու շատ մի դուստայ, ինձ չես կարող խաբել . . .  
հարցնում եմ քեզ. երեկ ժամի քանի՞սին եկաւ վարժուհին:

**Պօղոս.** Ասուած վկայ չեմ իմանում, զանգի ձէնն էլ չիմացայ:

**Դարիա.** Ես ի՛նչ եմ ասում, էս կասկածելի կինը այնպէս է տուն  
մտել, որ ոչ ոք չէ նկատել. չէ՛ Շուշան, էլի եմ ասում, որ էստեղ մի ինչ  
որ բան կայ:

**Շուշան.** Ծառայի մօտ գոնէ կամաց խօսիր:

**Դարիա.** Դէ՛ շուտ. գնա՛ բանիդ. (Պօղոս գնում է):

**2) Նոյն, առանց Պօղոսի.**

**Դարիա.** Է՛, դու ինչ ես ասում արան քոյրիկ. ես եթէ քո տեղ  
լինէի, այս խայտառակութեան էլ չէի համբերի, մի լաւ պտուղ էլ ձեր  
Ստեփան Իվանիչն է երեւում:

**Շուշան.** Ախ քոյրիկ ջան, ինչ մտածելս ինքս էլ չեմ իմանում,  
ճշմարիտ զարմանայի է, մանաւանդ որ Ստեփան Իվանիչը չափից դուրս  
ուշադրութիւն է դարձնում դրա վերայ:

**Դարիա.** Դրանից աւելի էլ ի՛նչ պիտի լինի. քիչ է մնում որ խալիսի  
առաջ նրա ձեռները պահէ: Ձի Թողնում մի ուրիշ բան ասելու, մի զուլիս  
նրա վերայ է խօսում: Ձէ՛, քոյրիկ ջան, երբ քեզ վերայ նայում եմ,  
սրտիցս արիւն է գնում. այս բանը ես այսպէս չեմ Թողնի, ինձ լսեցէ՛ք,  
գնանք էդ մամզելի մօտ ու մէ բաշ հարցնենք նրան թէ էն չորս ձեռնով են  
ասում. ինչ է, իմանում է՞ թէ չէ, ու տեսնենք թէ դրա շնորքը ինչու՞մն է:

**Շուշան.** Ինձ համար միեւնոյն է, բայց վախենում եմ որ զուր  
տեղը Ստեփան Իվանիչին չը ներթոցենեմ, գուցէ՛ սա մի դատարկ բան է  
ու մտքս անմեղ է:

**Դարիա.** Դրանք դարդակ խօսքեր են, տղամարդկանց անպիսան  
քնաւորութիւնը ես լաւ եմ հասկանում, հէնց դրա համար չէ՞ր որ ես էլ  
մարդու չ՛գնացի . . . քոյրիկ ջան, դու մենակ նրա աչքերին նայիր, նա  
էնպէս դէս ու դէն է նայում, էնպէս շուտ ու մուռ է գալիս, որ խկոյն  
Թւում է թէ, սրտումը ինչ որ բան է Թագնում:

**Շուտան.** Մի զարմանալի բանն էլ այս է, ես հաստատ գիտեմ, որ այսօր գրասենեակում աշխարքի գործն ունէ, իսկ նա բոլորովին զործի չէ գնացել, կարծես թէ վախենում է նրան մեռակ թողնելու:

**Գարիա.** Այսեղ մի ինչ որ ծածուկ բան կայ. ես կարս էլ բաց արեցի, ու Ստեփան Իվանիչի մօտ դիպ պիկի սասանոցն ու թրէֆի դաման էր դուրս գալի . . . սիկի սասանոցը իօ սէր է նշանակում, ամենքը գիտեն: Է՛հ, գնանք քոյրիկ ջան, թէ որ Աստած ճշեց, նա մեր ճանկը կընկնի:

**Շուտան.** Ահ, քոյրիկ ջան, էս խօսակցութիւններից ես շատ եմ վախենում:

**Գարիա.** Մի վախենայ հոգիս, ես ամէն բան կը սարքեմ ու կարգի կը գցեմ. (գնում են):

**3) Աղաբէգեանց.**

(Շփոթւած ներս է մտնում) Ամբողջ գիշերը մի բոպէ աչքս չեմ կարողանում փակել, այ՛քեզ բան . . . հիմի վախս այն է, որ ամէն մի բոպէ իսկական վարժուհին կարող է գալ, եւ այն ժամանակ այնպիսի խառնաշփոթութիւն դուրս կուգայ, որ մտում է թողնել փախչել: Եթէ գիտենայի թէ նա որեղ է, ես նրան իսկոյն կը հեռագրէի, մինչեւ անգամ դիմաւորելու էլ չ'պիտի գնամ, որովհետեւ մի քալ անգամ սանից հեռանալու վախենում եմ:

**4) Նոյն եւ Փօրժ. (սեներակից).**

**Փօրժ.** Բարեւ սիրելիս, հ'ը, ի՞նչու այդպէս թեւում ես երեւում, չ'լինի՞ թէ մեր նոր վարժուհու վերայ սիրահարւեցար:

**Աղաբ.** Թող ի սէր Աստուծոյ քո այդ յիմար կասկներդ . . . գլուխս բոլորովին խառնւած է: Արի՛ դու ինձ մի եղբայրական ծառայութիւն արա, որի համար անչափ շնորհակալ կը լինեմ քեզանից, միայն թէ այս բանը մեր մէջ մնայ:

**Փօրժ.** Ա՛, ա՛, ուրեմն կնոջիցդ գաղտնի բանե՞ր ես բռնել:

**Աղաբ.** Դէ՛ կաց, թող որ պատմեմ թէ բանը ինչումն է:

**5) Նոյն եւ Կոստանդին.**

**Կոստ.** Բարի լոյս, Ստեփանի Իվանիչ, ա՛, Փօրժ, դո՞ւն էլ էսեղ ես, ուրախ եմ որ ձեզ միասին գտայ. մի շատ կարեւոր բան պէ՞տք է հաղորդեմ . . . հաւատացէք որ ամբողջ գիշերը չեմ քնել:

**Աղաբ.** Գ՛ծիշ ինձ պէս:

**Փօրժ.** Սիրահարւածները երբէք չեն քնում:

**Աղաբ.** Դու ո՞րտեղից իմացար որ ես սիրահարւած եմ:

**Փօրժ.** Ես Կոստանդինի մասին եմ խօսում, դէ՛, տեսնե՞ր ի՞նչ ես պատմելու:

**Կոստ.** Ստեփան Իվանիչ, ձեր սան մէջ սարսափելի բաներ են կատարւում, եւ ես բոլորիս օգտի համար պարտք եմ համարում ամէն ինչ յայտնել . . . ձեր նոր վարժուհին . . .

**Աղաբ.** Է՛, ի՛նչ է եղել մեր վարժուհին:

**Կոստ.** Բոլորովին վարժուհի չէ, այլ մի քողարկւած անձնաւորութիւն:

**Աղաբ.** Ամէն բան իմանում է այս աւագակը . . . ես իմ ծաղիկ հասակում պիտի մեռնեմ . . . ի սէր Աստուծոյ կամաց խօսիր:

**Կոստ.** Այդ կինը երեսին փաղաքշանք եւ սրտուժը նենգութիւն թագցրած ձեր տունը մտաւ:

**Աղաբ.** Նա սնդուկի մէջ դրւած եւ շատ էլ պինդ կապւած էր:

**Կոստ.** Բայց ես նրա կապած կապը կը բանդեմ. իմ ու վիրգիների ամուսնութիւնը նա խանգարել է կամենում:

**Աղաբ.** Ուրեմն դուք նրան վա՞րջուց էիք ճանաչում:

**Կոստ.** Ո՛չ, ես առաջին անգամն է որ տեսնում եմ նրան . . . գիտէ՞ք ի՛նչ. երբ ես մեր բոլոր յարաբերութիւնները ընդհատեցի . . .

**Աղաբ.** Բայց կաց տեսնեմ. ի՞նչ յարաբերութիւններ, քանի որ դու նրան առաջին անգամն ես տեսնում:

**Կոստ.** Խօսքս նրա քրոջ մասին է:

**Աղաբ.** Նա քոյր չու՛նէ:

**Կոստ.** Ո՛չ, ունէ՛, ես մի ժամանակ շատ էի հետեւում նրան ու մինչեւ անգամ կամենում էի ամուսնանալ:

**Աղաբ.** Դուք քա՞նի տարեկան էք:

**Կոստ.** Չարմանալի հա՛րց . . . 28:

**Աղաբ.** Է՛հ, հոգի ջան. դու չէք մեծացել որ կարողանար նրա քրոջ վերայ ամուսնանալ, եթէ մի հարիւր անգամ աւելի ապրէք, էլի նրանից մի երեք հարիւր տարով պակաս կը լինէք:

**Փօրժ.** Ստեփան Իվանիչ, դու զառանցում ես ի՞նչ է . . . ի՞նչ 3000 տարի . . .

**Աղաբ.** Թող ի սէր Աստուծոյ, դու ոչինչ չես հասկանում . . . լա՛ւ, եթէ դու ճանաչում ես նրա քրոջը, եւ կամենում էիր նրա հետ ամուսնանալ, դու չէ՞իր արդեօք այն Ամֆիօնը, որի մասին նա խօսում էր:

**Կոստ.** Ի՞նչ Ամֆիօն. ի՞նչ էք ասում, ես միայն այն գիտեմ, որ այդ Ալէվդինան օրիօր Սվիդէրակայաի հարազատ քոյրն է:

**Աղաք.** (Մեկուսի) Այսպիսի անուն կարծեմ չ'կար դիցարանու-  
թեան մէջ:

**Կոս.** Եւ հէնց նա իւր քրոջ յանձնարարութեամբն էլ այսեղ եկաւ:

**Աղաք.** Ա'հ. նա նրան իսկական վարժուհու սեղ ընդունեց . . .  
Ֆ'ուհ . . . քիչ էր մնում ամէն ինչ նրան գրուցէի. հանգստացէք պ. Կոս-  
սանդին, ես երաշխաւորում եմ, որ այդ կինը առաջուց չէր էլ իմանում  
ձեր գոյութեան մասին . . . անհոգ կացէք. ես այս բոլորէիս Վիրգինէին  
կը կանչեմ, եւ դուք նրա հետ խօսեցէք, (մեկուսի) պէտք է Նիօբէին  
նախազգուշացնել, այս Թէ ոչ, եթէ նա սկսէ ամէն ինչ պատմել, այն  
ժամանակ այնպիսի խառնակութիւն դուրս կը գայ. որից Ասուած Թափէ  
ազատէ. (Ժօրժի հետ հեռանում է):

**6) Կոստանդին, (առանձին).**

Նա Թէեւ ինձ հանգստացնել է աշխատում, բայց ես սասիկ վա-  
խենում եմ, այս լեհուհիները այնպէս վրէժառու են որ . . . եւ ես այնքան  
յիմար էի որ այրեցի նրա նամակները, կը վերադարձնէի դրանց եւ ամէն  
բան կը վերջանար: Բայց նա այսեղ է գալիս, եւ բացադուծիւններ տալը  
անխուսափելի է, ինչ լինում է Թող լինի. (Նիօբէ մտնում է) բարեւ, օրիորդ:

**7) Նոյն եւ Նիօբէ,** դուրս է գալիս սենեակից.

**Նիօբ.** Տես, ոսկեփետուր Ֆէրօսը անա վառեց կանթեղը, եւ օրը  
պայծառ ու գեղեցիկ է:

**Կոս.** Բարեւ ձեզ օրիորդ:

**Նիօբ.** Բայց ու՞ր է տէրքս, չեմ տեսնում նրան:

**Կոս.** Նա շարունակ նգնում է ոտնաւորով խօսել . . . լա'ւ  
բանասերձուհի է . . . իսկոյն կու գայ Ստեփան Իվանիչը, նսեցէք  
խնդրեմ, մինչեւ նրա գալը, մենք կարող ենք գրուցել. (Նիօբէ գորգի  
վերայ նստում է եւ բազկաքոռին յեկում) Ի'նչ տարօրինակ նստածք եւ  
այս ի'նչ խաղեր են . . . ներեցէք իմ հետաքրքրութեանս, դուք իբրեւ  
վարժուհի եկած էք այսեղ, երեխաների հետ պարապելու համար, բայց  
գուցէ դուք մի ուրիշ նպատակ եւս ունէք:

**Նիօբ.** Եթէ կամենաս իմ մասին զիտենալ դու որ եւ է բան' հար-  
ցու սիրոջս, եթէ ինձ Թոյլ տայ, ամեն ինչ կասեմ:

**Կոս.** Գրողը քանի . . . սա շատ է գրաւել Ստեփան Իվանիչով . . .  
գարմանալի' ճաշակ . . . դուք կարծեմ վարշավայումն էք ծնած:

**Նիօբ.** Ես հրաշալի ելլաղայումն եմ ծնած ու սնած, եւ անհոգ  
զարթ ապրել Աթէնքում, եւ ամուսնացայ ու ինքս ինձ գտայ Թերէի մի  
ձոխ, շքեղ պալատում, այդ սեղ ես ծնայ եօթը հաս տղերք, նոյնքան էլ  
աղջկերք:

**Կոս.** Օհօ'. 14 հաս . . . վաս չէ', եւ ի'նչպէս էլ դեռահաս . . .  
երեւի ծիծաղում է ինձ վերայ:

**Նիօբ.** Բայց Հիմէնէի սուրբ կապը երկար ես չը կրեցի, ճակատա-  
գիրը ինձանից երես դարձրեց շուտով, եւ անչափ սիրած անգին ամուսնու  
չար մահը խլեց. (լալիս է):

**Կոս.** Բան չեմ հասկանում . . . ես ուղղակի պիտի հարցնեմ . . .  
Դուք վերջին անգամ ո՞րտեղ պատահեցաք ձեր քրոջը:

**Նիօբ.** Մե'նք. Վենետայի սուրբ տաճարի մէջ. այնտեղ երկուսս էլ  
զոհեր մատուցինք:

**Կոս.** Վենետայի տաճարում . . . բայց Ալէվզինան ի՞նչ գործ  
ունէր այնտեղ . . .

**Նիօբ.** Գա մի մեծ օր էր, պէտք է նշանէր անչափ սիրելի Հիս-  
պիթոթի հետ, նա մի քաջ, հուժգու, սէպ պատանի էր, կոււելու զնաց, եւ  
պատերազմում պատուով էլ մեռաւ:

**Կոս.** Ինչե՞ր է դուրս տալիս . . . երեւի սա ինձ յիմարի տեղ է  
դնում:

**8) Նոյն եւ Աղաքէգեանց.**

**Աղաք.** Ասուած իմ, նրանք խօսակցում են, ուրեմն ամէն ինչ  
կորա'ւ . . . պ. Կոստանդին, ներեցէք խնդրեմ, ես մի բանի խօսք ունիմ  
ստեղծ Մարգարիտա Վալէնտինովնային:

**Կոս.** Լա'ւ է, այս էլ պէտք է ասած, Ստեփան Իվանիչ, որ դուք  
ժամանակ չէք կորցնում, բայց խորհուրդ եմ տալիս ձեզ որ զգոյշ լինէք,  
սա ձեր զիտեցածներիցը չէ, այնպէս իտրամանկ է, այնպէս սասանայ որ . . .  
pardon! զնում եմ (զնում է):

**9) Նիօբէ եւ Աղաքէգեանց.**

**Աղաք.** Արդեօք ի՞նչի մասին էին խօսում այստեղ: Է'հ բանի որ  
առանձին ենք, միանգամ եւս կրկնում եմ ձեզ որ բոլորին ամէն ինչ  
չ'խօսէք: Աշխատեցէք լուռ մնալ օտարների մօտ, իսկ եթէ կանացի սովոր-  
ութեան համեմատ շատախօսելու պարտեալ ունենաք, այն ժամանակ  
միայն ինձ հետ խօսեցէք:

**Նիօբ.** (Պատուհանի մօտ) Ա՛հ նա՛յիր. սէր իմ, ի՞նչ *saurorինակ* են ձեր յաղթական կառքերը, ա՛հա՛:

**Աղաբ.** Ի՞նչ յաղթական կառք . . . դա մի փողոցի ֆաէսօն էր որ անցկացաւ, բայց այդ մի կողմ թողնենք, ես լրջօրէն խնդրում եմ ձեզ, մինչեւ իսկ պահանջում եմ որ . . .

**Նիօբ.** Եւ սես պատանին շատ օտարոսի զգեսներ հագած Տիգրանի պէս թռչում է արագ, առանց երիվարի, մի զոյգ պողպատեայ անիւի վերայ. . .

**Աղաբ.** Այդ վերջուպեղիս է . . . անպատճառ մէկին տակով պէտք է անէ . . .

**Նիօբ.** Օ՛ր ուրախութեանս, ի՞նչ երջանկութիւն, ա՛հա հայրենի երկրիս զինուորը, որի զլխումը տե՛ս, տե՛ս, մե՛տաղեայ փայլուն սաղաւարտ:

**Աղաբ.** Ու՛ր է, տեսնե՛մ, հա՛, հրդեհաշէջ է դա, — պաժարնի, բայց ձեռք վերցրէք խնդրեմ այդ փողոցիցը, ա՛րի, մտածենք թէ ի՞նչ կերպով կարող են ձեզ ձեր հայրենիքը ուղարկել, զո՛ցէ ազգականներ ունէք այնտեղ:

**Նիօբ.** Ինչպէ՛ս, ո՛վ սէր իմ. դու կամենում ես որ ես հեռանամ այս խաղաղ տնից, որտեղ ես ա՛հա ձեռք բերի կրկին բաղրաւորութիւն եւ ուրախութիւն . . . այս վիշտը մեծ է . . . (լալիս է):

**Աղաբ.** Դէ լա՛ւ, չէ՛, չէ՛, . . . դուք ինձ չ՛հասկացար . . . դէ. մի լաք, ի սէր ձեր աստածների . . . չէ՛, սա ոչ թէ կին է, այլ աղբիւր է. դուք վերջ իվերջոյ այստեղ ջրհեղեղ պիտի հանէք . . . այսինքն ձեզ հետ կրկնակոշիկներով եւ անձրեւակալով պէտք է խօսենք . . . խնդրեմ ուշադրութեամբ լսեցէք ինձ, ես ձեզ իբրեւ վարժուհի պիտի ներկայացնեմ այստեղ եւ դուք պիտի պաշտպանէք ինձ:

**Նիօբ.** Բայց ասացէք ինձ, ի՞նչ պիտի անեմ եւ կամ ի՞նչ խօսեմ:

**Աղաբ.** Գլխաւորն այն է, որ դուք խոնարհ եւ հնազանդ լինէք:

**Նիօբ.** (Հպարտ) Զգասացի՛ր դու, ես թագուհի եմ, երակներումս թագաւորական հոտում է արիւն:

**Աղաբ.** Է՛հ, այդ դիցաբանական արիւն է: Այսպէս ուրեմն, դու այստեղ երեխաների հետ պէտք է պարապես, եւ ոչ մի բանի առիթով ոչ որքի չ՛պիտի հակառակես, — զլխաւորաբար քենուս, ինչ որ էլ քենիս քեզ ասէ, պատասխանիր «բարի», շատ լաւ, այդպէս է, իսկոյն» . . . հասկա՞նում էք . . .

**Նիօբ.** (Կլասիկ ձեւերով) «Շատ լաւ». այդպէ՞ս է, «իսկոյն» . . . այսպէս չէ՞:

**Աղաբ.** Ձեր ձեւերը այնպէս են, որ կարծէք թէ բեմի վրայ լինէք, աւելի պարզ պէտք է ասել. ա՛յ, այսպէս. «բարի», շատ լաւ, իսկոյն» եւ այլն:

**Նիօբ.** Ա՛հ, ես շատ դժուար պիտի ըմբռնեմ քո հրամանը:

**Աղաբ.** Մէկ էլ այն՝ որ ինձ հետ «դու»ով մի խօսիր, այդ ի՞նչ ընտանեկան ձեւ է, Ստեփան Իվանիչ անւանեցէք ինձ, եւ զլխաւորաբար քենուս հետ խօսելիս զոյշ եղէք . . . դա ոչ թէ կին է, այլ աւելի ցիշտը, բոս դիցաբանութեան մի ֆուրիա է, լաւ է որ նրանից զոյշ լինէք, եւ ամեն բանում նրան հնազանդ: Նաեւ դուք ինչու՞ երգելով էք խօսում եւ աշխատում որ ամենամասարակ խօսքն անգամ օտանաւորով դուրս գայ:

**Նիօբ.** Այս լեզուն միայն վայել է խօսել հէզ Նիօբէին:

**Աղաբ.** Բայց մոռացէք որ դուք Նիօբէ էք, մոռացէք, դուք հիմի Մարգարիտա էք, Մարգարիտա Վալէնտինովնա:

**Նիօբ.** Ո՛չ, ես ինքս ինձ չեմ կարող մոռնալ. եւ իմ անունս ամէն զանձերից թանգ է ինձ համար, բայց ի՞նչու, ի՞նչու դու կամենում ես ինձից խլել այդ. (լալիս է):

**Աղաբ.** Դարձեա՛լ. դէ, հերիք է, հերիք, ոչ ոք ձեզանից ոչինչ չէ խլում . . . Նիօբէ՛, Նիօբէ՛իկ ջան . . . (գրկում է նրան եւ ապա նկատում կնոջը եւ Դարիաին որ մտնում են) հանգստացէք սիրուհի, դուք մեր տան մէջ սիրալիր ընդունելութիւն կը գտնէք, իմ ամուսինս մի հիասթափ կին է, իսկ նրա քոյրը, — քենիս — մի անմասն արարած, նա իւր մէջ ամէն չարութիւն բովանդակում է . . . Թու՛հ, այսինքն բարութիւն կամենում էի ասել: Ա՛, դուք ա՞յստեղ էք, ե՞րբ եկաք որ ես ձեզ չ՛տեսայ . . .

**Շուտամ.** Հէնց այս բոլորէս մտնաք:

**Աղաբ.** (Կանայ) Ի սէր Աստուծոյ միսիթարեցէք այս խեղճ աղջկան:

**Դարիա.** Է՛հ, ձեր միսիթարութիւններից յետոյ մերը այնքան էլ հասցելի չի լինի նրան: Է՛, օ՛րիորդ Սվի . . . Սվի . . . ի՞նչպէս է ձեր ազգանունը, Սվիտերակա՞յա է, ինչ է. ձեր սենեակը գնացէք:

**Նիօբ.** Իմ տէրն է միայն ինձ հրամայում: Միշտ եւ ամէն ժամ հըլ եմ նրան:

**Դարիա.** Է՛, ազնիւ օրիորդ, թողէք խնդրեմ ձեր այդ ծոսի պոսի բաները, գնացէք ձեզ որ ասում են գնացէք էլլի՛, վա՛: Ստեփան Իվանի՛չ, դուք ի՞նչու փեսացած կանգնել էք, հասկացրէք այս օրիորդին, որ ես իմ քօջս խնդրանքով այս տան բոլոր կառավարութիւնը ինձ վրայ եմ վերցրել:

**Աղաբ.** (Նիօբէին) Բայց չէ՞ որ ես ձեզ ասեցի՛ . . .

**Նիօբ.** Յիշեցի ես տէ՛ր, քո պատէրները, հնազանդ լինել, անտեսուել տանել բոլոր մինչեւ վերջ, եւ պատու ու չար ցնդած ֆուրիաից, միշտ զոյշ լինել:

**Դարիա.** Ի՞նչպէս թէ ֆուրիա . . . բայց դու ի՞նչպէս ես համարձակում . . .

**Շուտամ.** Կա՛ց, Դարօ ջան. սպասիր, ամէնքից լաւն այն է որ մեր որոշման համեմատ քննութեան ենթարկենք նրան:

**Աղաբ.** Ի՞նչ. քննութիւն . . . օհօ՛. մենք կը կտրվինք.

**Գարիա.** Լա՛ւ, քննենք, կայ, հիմի ես նրան կը կապեմ: Է՛, օրիորդ, թէ՛ եւ ես ֆուրիա եմ, բայց եւ այնպէս հետաքրքիր է իմանալը թէ՛ դուք ի՞նչ գիտէք, սարակոյս չ՛կայ որ կարդալ ու գրել գիտէք, հետեւաբար եւ հարցնելը աւելորդ է:

**Նիօք.** Թէ՛ աւելորդ է այդ հարցնելը, էլ ու՞ր էք հարցնում:

**Գարիա.** Է՛, էդ քո բանը չէ . . . օրինակի համար, ի՞նչ գիտէք աշխարհագրութիւնից:

**Նիօք.** Ինչ որ կամենաս, որ ես գիտենամ, բոլորը գիտեմ, ծառայ քո կամաց:

**Գարիա.** Է՛, ի՞նչ կը պատասխանէք ինձ. եթէ՛ ձեզ հարցնեմ թէ՛ երկիրը քանի մասի է բաժանվում:

**Նիօք.** Ինչքան քո կամքն է, այնքան էլ կը լինի:

**Գարիա.** Իսկ եթէ՛ ես ձեզ հարցնեմ թէ՛ ի՞նչպէս է Կովկասի մայրաքաղաքի անունը. ի՞նչ պիտի պատասխանէք:

**Նիօք.** Շատ բա՛րի. ա՛հա, տեսնո՞ւմ ես ինչպէս հլու եմ քեզի:

**Գարիա.** Այս ի՞նչ տեսակ պատասխան է:

**Շուշան.** Է՛, մի ուրիշ բան հարցրու:

**Գարիա.** Իսկ վերջին պատերազմը ի՞նչ պատճառով եղաւ:

**Նիօք.** Մարս, պատերազմի աստուծը անեղ, շատ էր զայրացած, բայց թէ՛ պատճառը ինչ էր՝ յայտնի չէ:

**Գարիա.** Իսկ պատերազմը ե՞րբ վերջացաւ:

**Նիօք.** Երբ հաշտութիւնը նորից կայացաւ:

**Գարիա.** Իսկ դուք ֆորտէպիան ամէլ գի՞տէք

**Նիօք.** Երբէ՛ք չեմ փորձել, բայց երբ հրամայես, քեզ հնազանդ եմ, կը փորձեմ, կարծեմ:

**Գարիա.** Ի՞նչ, ծիծաղո՞ւմ էք ինձ վերայ ինչ է՛:

**Նիօք.** ձիշտ որ այդպէս է:

**Գարիա.** Բայց ինչպէ՛ս. ինչպէս էք համարձակում. . .

**Շուշան.** Ստեփան Իվանի՛չ, բոլորովին միտք չունէ սրան իբրեւ վարժուհի պահել, բացի այն որ ոչինչ չ՛գիտէ, դեռ մեզ վրայ ծիծաղում է:

**Աղաք.** Որովհետեւ դուք պէտք եղածի պէս չէք հարցնում նրան . . . դուք նրան յունարէն պէտք է հարցնէիք, յունարէն՝ Վիրգիլի՛ն, Վիրգիլի՛ն, Վիրգիլի՛ն. այստեղ արի:

10) Շոյնի Վիրգ. եւ Կոստանդին.

**Վիրգ.** Ի՞նչ կայ, մօրեղբայ՛ր:

**Աղաք.** Մենք նոր վարժուհին պիտի քննենք, օգնի՛ր մեզ, եւ հին պատմութիւնից մի քանի հարցեր առաջարկի՛ր:

**Վիրգ.** Ի՞նչ էք ասում, մօրեղբայ՛ր, ամօթ է ինձ, թող պ. Կոստանդինը հարցնէ.

**Աղաք.** Ա՛հ, ճշմարի՛տ, պ. Սեմեան, յունարէն մի որ եւ է բան հարցէք նրան:

**Կոս.** Ի՞նչ էք հրամայում, Ստեփան Իվանի՛չ, ես մոռացել եմ, եւ մի խօսք եմ միայն յիշում:

**Աղաք.** Ի՞նչ խօսք:

**Կոս.** Կայօս, պենօս, խօսօս, կրեպէ: Դրանց էլ նշանակութիւնը չեմ յիշում:

**Աղաք.** Եթէ՛ այդպէս է, հարցէք պատմութիւնից, միայն թէ՛ ամենահին պատմութիւնից:

**Կոս.** Եթէ՛ դուք այդպէս պնդում էք, համեցէք, ո՞րտեղ է ծնւած Հոմերոս:

**Նիօք.** Մեծ եւ զօրաւոր եօծ քաղաքաց մէջ. վէճի նիւծ է այդ դեռ մինչեւ այսօր:

**Կոս.** Քանի մուգաներ կային եւ ի՞նչ էր նրանց անունները:

**Նիօք.** Ինն էին նրանք եւ յոչվում էին էվսէրնա, Կիօ, Մէլլոմէնա, Կալլիօպա, Թէրապիսօրա, Ուրանիա, Պօլիգիմնիա, Թալիա եւ Էրաթօ:

**Աղաք.** Ջրի պէս իմանում է:

**Գարիա.** Ջրի պէտք ես ձեզ շանց կուտամ, բայց վարժուհին պէտք է որ ամէն բան գիտենայ:

**Նիօք.** Պէտք է գիտութիւն, միմիայն նրանց՝ որք գրկւած են գեղեցկութիւնից, գիտութիւնը միայն քե՛զ է հարկաւոր:

**Գարիա.** (Կատարած) Ի՞նչպէս դուք համարձակում էք . . .

**Շուշան.** Հանդարտեցէ՛ք:

**Գարիա.** (Նիօքէի վրայ գնալով) Թողէ՛ք ինձ:

**Նիօք.** Օ՛. շանթնկեցդ վեհ, մեծըդ Արամազդ, Ոլիմպից ա՛հա, տեսնայն ինչ: Դու որ պաշտպան ես հեզ խոնարհների, գոռոզ չարութեան ընդ միշտ թշնամի, նայի՛ր ահա, այս հպարտին, չարին եւ զպիր նրա՛ն:

**Գարիա.** (Բողոքովից կատարած) Դո՛ւրս կորիւ մեր տանից . . . ամէնքին անձանօծ մի աղջիկ, որ սրա նրա տանը իրա համար բաղդ է փնտում, դո՛ւրս . . .

**Նիօք.** Ո՛չ, ես աղջիկ չեմ, ես ինքս մայր եմ եօծը տղերանց, եօծն աղջիկների:

**Շուշան.** Ստեփան Իվանի՛չ, լսում ե՞ս. 14 երեխաների:

**Աղաք.** Շուշան ջան, հոգի՛ս, մտածիւր միանգամ . . . ես կամենում եմ որ Տէր լինիմ իմ տան մէջ. ձեր քոյրը որքան կամենում է թող ուշանալի, թող զգգէ իւր սուտ, շինովի խոսողիքը, է՛լ չեմ թողնի որ իմ գործերումս խառնուին, հասկանում է՞ք . . . չեմ թողնի . . .

**Պարիա.** Ա՛հ . . . սիրս . . . գնում է . . . ջուր . . . օգնեցէր . . .  
**Վիրգ.** Դողա ջան, հանգսացէր:

**11) Նոյն եւ Պօղոս.**

**Պօղոս.** Աղա՛, ինչ որ կնիկ ձեզ է հարցնում:

**Աղաք.** Հիմի ժամանակ չունեմ, ասա թող յետոյ զայ, եւ կամ  
թող սպասէ . . .

**13) Նոյն եւ Սվիդերակայա.**

**Սվիդ.** Արդեօք կա՞րող եմ պ. Աղաքէզեանցը տեսնել:

**Աղաք.** Ես եմ . . . ի՞նչ էք կամենում:

**Սվիդ.** Ես ձեր հրաւիրած վարժուհին եմ:

**Բոլոր.** (Ընդհանուր զարմացում):

**Պարիա.** (Շուշանին) Ես քեզ չէ՞ի ատում . . . ես քեզ չէ՞ի ատում,  
ես գիտէի որ սա ոչ թէ վարժուհի է, այլ քո մարդու սիրեկանը . . .


**Շուշան.** Ասեա՛ծ իմ . . . (ուշաքափում է):

**Վիրգ.** (Նրա վրայ ընկնելով) Դողա ջա՛ն, դողա՛:

**Աղաք.** Պրծա՛ւ, էլ ազատում չկայ . . .

**Նիօք.** Օ՛. իմ ազնիւ սէր. կարող է փրկել, քեզ այս փորձանքից,  
քո աղախինը, թշուա Նիօքէն . . .

**Պարիա.** Ը՛հ . . . խողեմ քո զրուխը . . .



**Վարսագոյր**

**Գ. Ա. Բ. Ա. Բ. Ա. Ծ**

„ԱՅԼԱՆԳԱԿ ԵՐԱԶ“

**1) Շուշան, Պարիա եւ Փօրժ.**

**Շուշան.** Այսպէ՛ս, ուրեմն խափւած է իմ վստահութիւնս . . . այս-  
պէ՛ս ծիծաղել իւր երեխաների մօր վերայ . . .

**Պարիա.** Եւ ինձ վերայ էլ . . . նրանց մօրաբոջը . . .

**Փօրժ.** Եւ ինձ վերայ էլ նրանց հեռաւոր ազգականին . . . բայց  
եւ այնպէս հանդարտեցէր սիրելիներս . . .

**Շուշան.** Ձեմ կարող հանդարտել . . . ի՞նչ պիտի լինեն իմ խեղճ  
զաւակներս . . . դու այս չես կարող հասկանալ, որովհետեւ երբէք մայր  
չես եղած:

**Փօրժ.** Ինչպէս եւ հայր:

**Պարիա.** Իսկ ես ասել եմ եւ նորից եմ կրկնում, միակ միջոցն է  
մեկնել այստեղից . . .

**Շուշան.** Այո՛, այո՛, մեկնել:

**Փօրժ.** Բայց ի՞նչու դուք մեկնէք, աւելի հեշտ չէ՞ որ նրան դուրս  
չպրտէք, ամէն իրաւունք ձեր կողմն է, նա մէկ է, իսկ դուք երկուք,  
նա մի թող սղամարդ է, իսկ դուք, երկու ուժեղ կանայք:

**Շուշան.** Ի՞նչ ես խօսում, իսկ այդ ազնիւ կնոջ ի՞նչ պիտի անենք:

**Փօրժ.** Թող նա էլ նրա հետ միասին գնա:

**Շուշան.** Ի՞նչ ես ասում, Փօրժ, յետոյ ի՞նչ պատասխանենք մեր  
խեղճ երեխաներին:

**Փօրժ.** Այն՛ ինչ որ առհասարակ ասում են այսպիսի պարագայ-  
ներում . . . Թէ հայրիկը . . .

**2) Նոյն եւ Վիրգինէ.**

**Վիրգ.** (Վազելով) Դողա՛ ջան, էս բոպէիս երեխաների սենեակում  
մի կատարեալ տուր ու դմիոց էր . . . սարքվում, մեր վարժուհիները քիչ էր  
մնում միմեանց թակէին:

**Պարիա.** Ես էս բոպէիս մի լաւ նրանց կը ջարդեմ:

**Վիրգ.** Հանգսացէ՛ք, ամէն բան պրծաւ արդէն, մեկը լալիս է,  
իսկ միւսը կտրան վերայ ման է գալիս:

**Փօրժ.** Տեսնո՞ւմ էք, դուք բանը այնտեղ հասցրիք որ նրանց  
մինչեւ կտուր բարձրացրիք:

**Պարիա.** Վա՛յ թէ վեր ընկնի ու զրուխը ջարդէ . . . (քեմի ետեւ  
աղմուկ):

**Բոլոր.** Այս ինչ է. (պատահանից նայում են):

**Փօրժ.** Կարծեմ ժողովուրդն է հաւաքել, որպէս զի կտրան վերայ  
բարձրացող կնոջ նայեն:

**Վիրգ.** Ասեա՛ծներին է դիմում, եւ ամբողջ փողոցում բղաւում է  
ձէքօ՛ւ, ձէքօ՛ւ:

**Պարիա.** Ա՛խ, թէ մի դրան ուշատկա սանէի՛ն . . .

**3) Նոյն եւ Սվիդերակայա.**

**Սվիդ.** Pardon madame! Ես եկայ ձեզ խնդրելու որ ոսկկանու-  
թեան դիմէք . . . այս ինքնակոչը իմ բոլոր ունեցածս վերցրել է . . .  
իմ անունս, իմ պաշօնս, վերջապէս իմ շրջագրեսս . . . ես պահանջեցի  
որ բոլորը ինձ վերադարձնէ. բայց նա մի ամենափոքր ուշադրութիւն  
անգամ չէ դարձնում ինձ վերայ:

**Գարիա.** Նա ձեզ ոչինչ չի պատասխանե՞ց:

**Սվիդ.** Նա աղօթում է Արամազդին որ կայծակնհար անէ ինձ:

**Գարիա.** (Սվիդերակայաին) Երեխաներին հագեցրէք, մենք պիտի մեկնենք այս օրը, Շուշո, իմ ետեւից արի՛, ու լաւ գիտացիր, որ չեմ թողնի բեզ անպատիւ աննն. (զնում են):

**4) Ժօժ և Սվիդերակայա.**

**Սվիդ.** Գ. Կոստանդին Սեմեանը ձեր բարեկամն է՞:

**Ժօժ.** Այո՛, մենք համալսարանի ընկերներ ենք:

**Սվիդ.** Ես իմ քրոջից մի շատ կարեւոր յանձնարարական ունեմ նրա հասցէին, խնդրեմ այնպէս կարգադրեցէք որ մենք կարողանանք առանձին Տեսակցիլ:

**Ժօժ.** Ուրախութեամբ, սակայն այս բոլորիս սանը մէջ այնպիսի խառնաշփոթութիւն է տեսնում . . . բայց ահա՛, նա ինքն է այստեղ գալիս:

**5) Նոյն և Կոստանդին.**

**Կոստ.** Բարեւ ժողով, ա՛հ, դուք ա՞յս տեղէք օրիորդ Սվիդերակայա, ես ձեզ հետ մի շատ կարեւոր բանի մասին պէտք է խօսեմ:

**Սվիդ.** Ես էլ հէնց այդ միեւնոյնը կարգադրել խնդրում էի ձեր բարեկամից:

**Կոստ.** Աւելի լաւ, պատրաստ եմ ձեզ լսելու:

**Սվիդ.** Քոյրս . . .

**6) Նոյն և Աղաբեգեանց.**

**Աղաբ.** (Բեմի ետեւից գոռալով) Ո՛հ, ո՛հ, ո՛հ, չեմ թողնի, չէ կարելի, տէ՛ր ողորմած Աստած . . . Ինձ իբրեւ սիրահարական գործերի մէջ մտնող յանդիմանել . . . ա՛հ, դուք այստեղ էք օրիորդ, ներեցէք որ մի փոքրիկ անբաւականութեան հանդիպեցիք . . .

**Սվիդ.** Բայց ինչպէ՞ս նա համարձակեց իմ ազգանունս իւր վերայ ընդունել:

**Աղաբ.** Նա ոչ թէ ընդունեց, այլ նրա ազգանունն էլ այդպէս է:

**Սվիդ.** Իմ պաշտօնս ի՞նչ է:

**Աղաբ.** Ո՛վ առաջ գայ, նրանն է իրաւունքը:

**Սվիդ.** Վերջապէս իմ սնդուկս կոտրել . . .

**Աղաբ.** Ի՞նչու առաջուց էիք ուղարկել:

**Սվիդ.** Ես ձեր հրաւերի համաձայն եկայ այստեղ ձեր երեխաներին դաստիարակելու:

**Աղաբ.** Դէ՛, ես շատ լաւ գիտեմ թէ դուք ինչո՛ւ եկաք, որպէս զի ձեր քրոջ պատէրի համաձայն հետամուտ լինէք այդ երիտասարդին:

**Սվիդ.** Ինչպէ՛ս, դուք է՞լ գիտէք:

**Աղաբ.** Այո՛, գիտեմ:

**Կոստ.** Ստեփանէ Իվանի՛չ ի սէր Աստուծոյ լուեցէ՛ք:

**Աղաբ.** Բայց չէ՞ որ դուք ինքներդ խնդրեցիք որ ես այս մասին խօսեմ նրա հետ:

**Կոստ.** Բայց ոչ թէ սրա, այլ նրա հետ:

**Աղաբ.** Է՛հ, գրողը սանի, բոլորը մէկ է . . . այսպէս ուրեմն, դուք դրա համար չ՛եկա՞ք:

**Սվիդ.** Էլ աւելորդ է ծածկելը, ես եկայ որ պ. Սեմեանին մի շատ անախորժ լուր հաղորդեմ: Քոյրս . . .

**Կոստ.** (Կեղծ) Օ՛հ, մե՞ռա՛ւ, . . . ա՛հ որքան դժբաղդ եմ:

**Սվիդ.** Ո՛չ կենդանի է, բայց . . .

**Կոստ.** Ամերիկա գնա՞ց, ինչ է:

**Սվիդ.** Ո՛չ, նա ամուսնացաւ:

**Կոստ.** Ամուսնացա՞ւ, (լալով և պարելով) ամուսնացա՛ւ . . . ինչ՛ բաղդաւորութիւն . . . այսինքն դժբաղդութիւն, ո՛ւրախութեանս . . . ո՛հ, ո՛հ, ի՛նչ ուրախութիւն:

**Սվիդ.** Նրա ամուսինը ոչնչից տեղեկութիւն չունէ . . .

**Կոստ.** Նրա կողմից այդ մեծ ազնւութիւն է . . . յայտնեցէք նրան թէ նա դժբախտացրեց ինձ. իմ իրքը կտրե՛մ տրե՛մ արե՛ց, բայց այնու ամենայնիւ ես ներում եմ նրան եւ շնորհակալ եմ, այդպէս էլ կատէք իրան, բարեւեցէք եւ շնորհակալութիւն յայտնեցէք:

**7) Նոյն և Վիրգինէ.**

**Վ.ի.գ.** Մարգարիտա Վալէնտինովնա, դողան ձեզ է կանչում:

**Կոստ.** (Ուրախ սօցի փոխելով) Թրա լա՛, լա՛, լա՛ . . .

**Սվիդ.** Կարձեմ նա խելագարեց, մի՞թէ իմ քրոջ ամուսնութիւնը այդ ասիճան ազդեց նրա վերայ:

**Ժօժ.** Այս ժամանակամիջոցներում այս բանը միշտ պատահում է նրան:

**Աղաբ.** Է՛հ, դուք ձեր բանը պրծաք, կարծում եմ որ այստեղ մնալու այլ եւս ոչ մի պատճառ չունէք:

**Սվիդ.** Ես կը մեկնեմ այստեղից միայն այն ժամանակ, երբ իմ իրեղէններս լիովին կտանամ . . . գնանք օրիորդ Վիրգինէ. (զնում են):

**8) Աղաբէգեանց, ժօրժ եւ Կոստանդին.**

**Աղաբ.** Ինձ նայեցէ՛ք, ինչ ուզում էք արէք. միայն թէ դրան ճանապարհ գցեցէք . . . չէ՞ որ նա իսկապէս ձեզ համար եկաւ:

**Կոս.** Լա՛ւ, լա՛ւ, ես ամէն ինչ կը կարգադրեմ, ամէն բան յաշտօթեամբ վերջանալուն անչափ ուրախ եմ ես:

**ժօրժ.** Մի՛նչեւ անգամ անապատելի էր, մաղարիչը քեզ վերայ է:

**Կոս.** Օ՛, ուրախութեամբ. ի դէպ, պէ՛տք է հարսանիքի համար հարկաւոր եղածը կարգադրել, գնանք ժօրժ:

**ժօրժ.** Գնանք: Երգվում եմ որ դու այնքան լաւ կատարեցիր քո դերը. որ խորհուրդ կուտայի քեզ գնալ ուղղակի դերասան դառնալ:

**Կոս.** Հա՛, հա՛, հա՛, դէ գնանք. (գնում են):

**9) Աղաբէգեանց միայնակ, յետոյ Նիօբէ.**

**Աղաբ.** Էօ՛ֆ, վերջապէս օդը մի փոքր մաքրվում է . . . ես հիմի ափսոսում եմ թէ ի՞նչու ամբողջ Ճշմարտութիւնը միանգամից չասցի . . . բայց գրողը ճանի, ես ոչ մի բանում մեղաւոր չեմ, իսկ մէջքեղում իմ անունն է բերնէ բերան խուսում:

**Նիօբ.** (Մտնելով) Օ՛ վե՛հ ասուածներ, դիմում եմ կրկին որ ինձի նորից փոխարկէք բարի:

**Աղաբ.** Ա՛յ խելացի խնդիրք, խօսք չունեմ ասելու:

**Նիօբ.** Աղջիկն այն նորեկ, հանել է ուզում իմ հագուստներս, հրամայում ես, ս՛վ հրամանատար. վերադարձնել, եթէ կամենաս ես մերկ կը շրջեմ:

**Աղաբ.** Համեցէ՛ք, սեսնում էք ինչ հնազանդ է, բայց մի՞թէ չգիտէք որ հագուստը այդ կնոջն է վերաբերում:

**Նիօբ.** Կարողես բռնի առնել նրանից:

**Աղաբ.** Վաս խորհուրդ չէ . . . բայց նա ոստիկանութեանը կարող է դիմել:

**Նիօբ.** Ոստիկանութե՞ան . . . ա՛, անծանօթ է ինձ այդ անունը:

**Աղաբ.** Այս ողորմելիին ոստիկանութիւն խօսքն անգամ չէ իմանում, ա՛հ, տղին գիտէ՛ք թէ ձեր այդ կենդանանալովը ի՛նչ փորձանք բաց արիք գլխիս:

**Նիօբ.** Տեսնում եմ, տէր իմ, որ ձեզ ծանրութիւն եմ ես պատճառում, ձեր անդորրութիւնն ես խանգարեցի. թունաւորեցի ձեր խաղաղ կեանքը. (քուրք կտրելու դանակը վերցնելով) Թող այս դաշոյնը պատուէ ահա իմ թշուաւ սիրքը:

**Աղաբ.** Կա՛ց, կա՛ց . . . Թէեւ նա ոսկրից է շինւած, այնուամենայնիւ սրա հետ չէ կարելի կատակել, աւելի լաւ է որ դուք խելօք կենար . . . այս հագուստը պէ՛տք է վերադարձնել, իսկ ձեզ համար մի նորը կապալարեմ, նես արդէն սովորել եմ թէ չափսը ինչպէս պէ՛տք է վերցնել: Ահա այս էլ նմուշները . . . որ՞ն էք ասելի հաւանում:

**Նիօբ.** Օ՛ ազնիւ ընկեր . . . ուրեմն թոյլ տուր ջերմ համբոյրներով առօրս եռանդը քեզ ապացուցել: (Համբուրում է նրան եւ ապա յասակի վրայ նստելով նմուշներին է նայում):

**Աղաբ.** Զարմանալի բան, բոլոր կանայքն էլ միասեակ են, թէ իսկականները եւ թէ քարաշէնները . . . ո՞ւր մնաց սանթիմեթրս . . . ա՛, ահաւասիկ . . . միայն թէ ինչպէս անենք որ չջվոճէի, որ կարողանամ դերձակուհու սովաքցածի պէս չափս վերցնել . . . կանգնեցէք ինդրեմ, ես ձեր չափսը պիտի վերցնեմ. ձեռքերնիդ սէք սեսնեմ:

**Նիօբ.** (Կանգնելով) Ծիրանագոյնը յարմար է դէմքիս, ինձ մի ծիրանի զգեստ կարեցէք:

**Աղաբ.** Այո՛, այո՛, անպատճառ, թեւքերն էլ անշուշտ ուռած սեռակիցը լինի:

**Նիօբ.** Տեսնում եմ այժմ որ դու սիրում ես հէզ Նիօբէին:

**Աղաբ.** Հանդար՛տ . . . հանդար՛տ կացէ՛ք . . . 42. այժմ շրջագգեսք (չափում է):

**10) Նոյնի եւ Շուսան.**

**Շուսան.** Հիանալի է, սքանչելի. ամօժ ասած բանը ձեզ համար չկայ:

**Աղաբ.** Կինս է՛ . . . Բռնեցայ:

**Շուսան.** Մարդու առանձին խօսք ունեմ ասելու, բարեհաճեցէք դուրս գնալ այսեղից:

**Նիօբ.** Հրամայի՛ր, կերթամ, բայց կամենում եմ որ նախ քեզ յայտնեմ սրտիս զաղտնիքը:

**Աղաբ.** ձիշտ որ ժամանակ է յայտնելու, Շուսանիկ, բոլոր ճանեցող կանչիր, Թող բոլորն էլ Ճշմարտութիւնը իմանան, այն ժամանակ կը սեսնես, որ ես ո՛չ մի բանում մեղաւոր ոչեմ:

**Շուսան.** Վերջապէս ես ամէն բան պիտի իմանամ. (գնում է):

**Նիօբ.** Դէ՛հ, բարեաւ մնաս, սիրելիդ իմ տէր, տունդ ես մտայ եւ պատճառ դարձայ վէճի, աղմուկի: Ա՛հ այս զգեստը, ես ուրախութեամբ թողնում եմ սրան, որ ճղամարդու զրահի նման սեղմում էր կուրծքս, դարձեալ կը հագնեմ իմ արքայական նախկին հանդերձս, եւ իմ զգեստիս բոլոր ճոխութեամբ կը վերադառնամ, որպէս զի յայտնեմ ես իմ գաղտնիքս,

բարե՛աւ դու մնաս. քո բարութիւնը ես չեմ մոռանայ, քո փաղաքշանք եւ սէրդ. անկեղծ, անմահ կը մնան արտումս յաւիտեան: Բարե՛աւ դու մնաս իմ հոգեհասօր, եւ յիշիր միշտ քո Նիօրէին. (լալով զնում է):

**11) Աղաբէգեանց մեռակ եւ յետոյ բոլոր.**

**Աղաբ.** Դարձեալ լալիս է, եւ ինչո՞ւ նա մնաս բարեաւ էր ասում. զժբաղղաբար ես չեմ կարող նրանից շուտ ձեռք բաշել. . . . ա՛. համեցէ՛ք, համեցէ՛ք . . . .

**Մտնում են Շուշան, Դարիա, եւ Վիրգին.**

**Շուշան.** Ահա եկանք, բացատրեցէ՛ք խնդրեմ . . .  
**Դարիա.** Եւ մի մոռանաք որ ձեր ամեն մի սուտը խկոյն կը բռնեմ:  
**Վիրգին,** դու ի՞նչու եկար, գնա այստեղից:  
**Աղաբ.** Ձէ՛, չէ՛, թող նա էլ մնայ. ես մի այնպիսի բան չպիտի յայտնեմ որ նա չկարողանայ լսել. այս կինը, որի դէմ ամէնէրդ էլ զինւեցիր. այս կինը . . . բոլորովին կին չէ:  
**Դարիա.** Դու մեզ չես կարող խաբել, եթէ նա տղամարդ լինէր իմ սիրտը խկոյն կը զգար այդ:  
**Աղաբ.** Ո՛չ, ո՛չ, ես ուրիշ բան եմ ասելու, հասկանում էք, այս կինը, այսինքն այս անձնաւորութիւնը ինձ պահ է սաժ:  
**Բոլորք.** Ի՞նչպէ՛ս . . . պա՞հ է սաժ . . .  
**Աղաբ.** Այո՛, պահ է սաժ. նա շատ թանկագին է. եւ ես պէտք է լաւ պահպանեմ նրան եւ անվնաս տիրոջը հասցնեմ:  
**Դարիա.** Տիրո՞ջը . . . այս ի՞նչ անսովորութիւն է . . . ի՞նչ լպստածութիւն . . .  
**Շուշան.** Բայց ո՞վ է դրա տէրը:

**12) Նոյնք եւ Պօղոս.**

**Պօղոս.** Իշխան Բագրատունին եկաւ:  
**Աղաբ.** Հէնց նա է նրա տէրը:  
**Բոլորք.** Նա՞. Իշխա՞նը . . . (Աղաբէգեանց բազմում է):

**13) Նոյնք եւ Թելան.**

**Թելան.** Ներեցէք, սիկի՛ն, որ այսպէս ուշ ժամանակ եկայ. բայց ես կարեւոր գործ ունիմ ձեր ամուսնու մօտ:

**Դարիա.** Դժբաղղաբար մեզ յայտնի է այդ կարեւոր գործը:  
**Թելան.** Բայց նա ձեր կարծածի չափ էլ գաղտնի չէ. այլ միայն ես խնդրեցի նրան որ զգուշութեամբ պահէ . . .

**Դարիա.** Այստեղ մի ջանել աղջկան:  
**Թելան.** Է՛. ի՞նչ կայ որ, ես արձանի մասին եմ խօսում:  
**Բոլորք.** Արձա՞նի մասին:  
**Թելան.** Այո, իմ Նիօրէի . . . բայց ի՞նչու այդպէս յուզած եւ վրդովւած էք երեւում . . . ո՞ւր է Ստեփան իվանիչը. արդեօք Նիօրէիս մի բա՞ն պատահեց:

**Վիրգ.** Ո՛չ, նա իւր տեղումն է:  
**Դարիա.** Ձեր Նիօրէին ոչ որ ձեռք չէ տել. բայց ձեր այդ մամ-զէլը մեր զխին կատարեալ խաթարալս դառաւ:

**Թելան.** Ես ձեր ասածները չեմ հասկանում . . . ես Ստեփան իվանիչի մօտ եկայ որպէս զի ապրանքները անվնաս փոխադրելու մի նոր կերպը սովորացնեմ նրան, բայց բանի որ նա այստեղ չէ, ձեզ էլ կարող եմ հասկացնել . . . ահա՛ տեսնո՞ւմ էք. (վարագորյր բաց է անում պատշաճ դանի վերայ Նիօրէի փոխարէն Ստեփան իվանիչն է նստած խղճալի դէմում) Այս ի՞նչ է նշանակում, ո՞ւր է արձանս . . . ո՞ւր է իմ Նիօրէս . . . (Աղաբէգեանց ինչոր անտուտ խօսքեր է փնթփնթում) սրիկայ՛ դու ծախեցիր՞ նրան . . . հա՞. խօսի՛ր . . .

**Աղաբ.** Ո՛չ, ո՛չ, երդում եմ որ նա կենդանացաւ:  
**Թելան.** Կենդանացա՞ւ, դու հեքիաթներովդ կամենում ես ինձ խաբե՞լ, ես կսպանեմ քեզ. (բռնում է Աղաբէգեանցին եւ դիւանի վրայ տպրում):  
**Բոլորք.** Իշխա՛ն, զթա՛:  
**Թելան.** Ո՛չ, այս աւագակուժեան համար զթուժիւն չկայ, այս բոպէիս ես կը կանչեմ ոսիկանութեան եւ նա էժան չի պրծնի իմ ձեռքից. (զնում է):

**Բոլորք.** (Խնդրելով հետեւում են նրան):  
**Աղաբ.** (Դիւանի վրայ) Ոսիկանութի՛ւն . . . բա՞ն . . . կորաւ, ամէն ինչ կորաւ . . . ազատեցէք . . . (դուրը ձեռում են):

**14) Աղաբէգեանց եւ Պօղոս.**

**Պօղոս.** (Դրան ետեւից) Աղա՛, աղա՛, սիւթի 3 է . . . ուր որ են հիմի մերոնք կը վերադառնան երեկոյթից, (մտնում է) այնպէս է քնած որ չի էլ լսում, մոմը վառեմ . . . (ձայն) ա՛, մերոնք էլ գալիս են . . . աղա, աղա. վեր կացէ՛ք:

**Աղաք.** Հա' . . . ի՞նչ կայ . . . ներեցէք, ներեցէք . . . (չո՞ւում է Պօղոսի առաջ):

**Պօղոս.** Ախար ի՞նչ էք անում, աղա, էդքան էլ բնել կը լինի . . . խանութը երեկոյթից գալիս է:

**15) Նոյն, Գարիա, Շուշան, Վիրգինե, Փօրժ եւ Կոստանդին.**

**Աղաք.** Կի՛նս . . . Վիրգին . . . դուք է՞ք . . . ուրեմն երազ էր այս բոլորը. այո՛, միմիայն երազ . . . իսկ Նիօրէն . . . ա՛հ. նայել անգամ վախենում եմ . . .

**Բոլորք.** Բայց ի՞նչ պատահեց քեզ . . .

**Աղաք.** Է՛հ, ինչ կը լինի թող լինի . . . (վարագոյրը բաց է անում) այստեղ է . . . ամբողջ. անվնաս եւ սառն . . . ուրեմն մարմարեայ է օ՛հ . . . ամա սիրունիկս դու ինձ լաւ չարչարեցիր հա՛ . . .

**Գարիա.** Բայց պատմի՛ր թէ բանը ինչու՞մն է . . .

**Աղաք.** Բանը ինչու՞մն է՞. (ծողովուրդը ցայց սալով) նրանք ամէն ինչ սեսան ու գիտեն, նրանց հարցէք:



Վարագոյր

ԳԻՆՆ Է 20 Կ.

Վաճառվում է Թիֆլիսում կենդր. գրավաճառանոցում.  
Բազում Թառայեանց Եղբ. գրախանութում:

18218

2013

